



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Իւն «Աս. Կիսիցեան եւ Ընկ.» Ընկերութեան

Է. ՇԱՏՐԻՆ

ՓԱՄԱՅՈՐԺԻ

ՅԻՇՈՂՈՒԹԻ ԻՆՆԵՐԸ

(4.)



84
5-89

337-174-78

84-
5-89

սյ.

20 APR 2006

17.9 NOV 2010

8785
26
19
34

ՓԱՄԱԳՈՐԾԻ

ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԷՐԿՄԱՆ ՇԱՏՐԻԱՆԻՑ

Ազգաքարգանուրիւն

ՇՈՒՇԱՆԻԿ ԽԱԺԱԿՆԵԱՆԻ

182
35261

Հրատարակուրիւն
«Մ Տ. Լ Ի Ս Ի Ց Ե Ա Ն Է Ը Ն Կ.»
Ընկերութեան

ԹԻՖԼԻՉ

Էլեկտրագրութեան «ՀԵՐՄԷՍ» ընկեր., Մաղաքեան փողոց 15.
1905 90

16 .04. 2013

6001

3005 ЯРА 08

11 NOV 2010

4-870-83006

7737 7-4-9-10 105-18

043010205 20079

11 NOV 2010

Дозволено цензурою. Тифлисъ, 23 января 1905 г.

281

I

Իմ անունն է ժողէֆ Բէրտա: 1804 թւից սկսած ես սովորում էի ժամագործ Մէլիօր Գուլզէնի մօտ, Պֆալցբուրգ քաղաքում: Երեխայութիւնից ես թոյլ կազմածքի տէր էի և շուտ-շուտ հիւանդանում էի. դրա հետ միասին՝ մի քիչ էլ կաղում էի: Այդ պատճառով մայրս ուզում էր, որ ես քաղաքում մի թեթև արհեստ սովորեմ, որովհետև մեր գիւղերում աշխատանքը ծանր է. իսկ որ ինձ համար իմ կաղ ոտով և թոյլ ատոջութիւնով դժւար կը լինէր առաւօտից մինչև երեկոյ փայտ կտրել, ածուխ պատրաստել կամ սահնակ շինել: Ահա թէ ինչու ես աշակերտ մտայ ժամագործ Գուլզէնի մօտ:

Իմ բարի վարպետը շատ էր սիրում ինձ և մենք սպրում էինք իբրև շատ մտերիմ բարեկամներ: Այսօրւայ պէս տեսնում եմ այդ բարեհոգի մարդուն՝ տնային, մաշած սիւրտուկով, մետաքսէ, սև գլխարկը՝ մինչև մազոտ սկանջները քաշած, թառամած և կախկախ ընկած կողերով ու, խոշոր ակնոցներով թամքած, իր սուր քթով:

Մենք ապրում էինք մի մեծ տան մէջ, «Կարմիր Եզ» կոչւած գինետան ուղղակի դիմացը: Մեր փողոցով, 1804 թւից սկսած, երբ Նապօլէօնը Ֆրանսիայի կայսր դարձաւ, անագին ժողովուրդ էր անցնում—իշխաններ, դեսպաններ, գեներալներ, որովհետև Նապօլէօն կայսրը իրան բանուգործ էր շինել պատերազմը: Նա այսօր կուում էր անգլիացիների դէմ, վաղը աւստրիացիների, միւս օրը ռուսների դէմ... Բանակներն իրար ետևից անցնում էին մեր քաղաքով: Բոլոր անցնողները կանգ էին առնում «Կարմիր Եզ»-ի առջևը—նրանք քիչ փող չէին ծախսում այդ գինետանը: Ծերունի Մէլիօրը վայր էր դնում իր գործիքները, մօտենում լուսամուտին, դիտում էր անցնողներին և յաճախ ինձ հետ խօսակցում էր պատերազմի մասին:

—Ի՞նչ ես կարծում, Ժօզէֆ,—յաճախ հարցնում էր ինձ ծերունին,—1804 թւից սկսած ռեքան զօրք անցած կըլինի մեր կողմերով:

—Չըզիտեմ, պ. Գուլդէն,—պատասխանում էի ես նրան.—4 կամ 5 հարիւր հազար անցած կը լինի:

—Այո՛, ամենաքիչը,—ասում էր նա:—Իսկ դու տեսմը, շատերն են վերադարձել:

Այդտեղ արդէն հասկանում էի, թէ ի՞նչ էր ուզում ասել նա, և պատասխանում էի.

—Շատ կարելի է նրանք, որոնք այս կողմով չեն ետ դարձել, գնացել են տուն Մայնցի վրայով կամ մի ուրիշ ճանապարհով:

Ուրիշ կերպ չէր էլ կարող լինել:

Բայց նա բացասաբար գլուխը շարժելով, ասում էր ինձ. «Ովքեր մինչև այժմ չեն վերադարձել, մեռել են արդէն, ինչպէս կը մեռնեն ուրիշ հարիւր հազարաւորներ—եթէ Աստուած չըլիզայ մեզ վրա, որովհետև

կայսրը հէնց միայն պատերազմելու մասին է մտածում:

Մէնք նորից նստում էինք աշխատելու: Ծերունի Գուլդէնի խօսքերն ինձ մտախոհութեան մէջ էին գըցում:—Չը լինի՞ թէ ինձ էլ ուղարկեն պատերազմ, մըտածում էի ինքս ինձ:—Թէև ես մի քիչ կաղ էի, բայց չէ՞ որ ուրիշ շատ-շատերը նոյն տեսակ թեթև պակասութիւններ ունենալով՝ պատերազմ էին գնում: Այդ միտքն իմ գլխից չէր հեռանում և ոչ մի բոպէ հանգիստ չէր տալիս ինձ. առաջինը՝ որովհետև պատերազմը չէի սիրում և վախենում էի նրանից: Առանց սարսափի չէի կարողանում մտածել, որ ինձ պէտք է հրամայեն թողնել գործս, թողնել իմ սիրելի ծերունի Գուլդէնի տունը և գնալ՝ ո՞վ է իմանում, ռըր և ինչո՞ւ: Ես այդ չէի ուզում: Երկրորդը՝ զարհուրելով էի մտածում արշաւանքի մասին, որովհետև պէտք է պսակէի Կատարինէի հետ—«Չորս Գամիներ» կոչւած գիւղից. ես միայն այդ ամուսնութեան մասին էի մտածում:

Շատ էի սիրում ես այդ ուրախ, սպիտակադէմ, կապտաչեայ աղջկան կարմիր թշերով և ձիւնի նման սպիտակ ատամներով. դա ամբողջ շրջակայքում ամենասիրելի և ուրախ աղջիկն էր:

Նա մօտ 18 տարեկան էր, իսկ ես 19-ը: Գրէդէլը, նրա մայրը, ուրախանում էր, երբ կիրակի օրը առաւօտից ես գնում էի նրանց մօտ նախաճաշելու և ճաշելու:

Ես ուղեկցում էի Կատարինէին դէպի եկեղեցի, իսկ տօն օրերին նա իմ ձեռքը բաց չէր թողնում, ինձ հետ էր միայն պարում և մերժում էր գիւղի միւս երիտասարդներին: Բոլորը գիտէին, որ մենք պէտք է պսակէինք, իսկ եթէ ինձ զինուոր տանէին, այդ բոլորը կը կորչէր:

Այդ ժամանակներում զինուոր էին առնում ամենից առաջ չըպսակածներին, յետոյ երեխայ չունեցողներին, յետոյ էլ մէկ երեխայ ունեցողներին:

Ես մտածում էի. «Եթէ տանում են ընտանիքի հայրերին, ինչո՞ւ չը պէտք է տանեն կողերին էլ: Շատ կարելի է, որ շուտով հերթը ինձ էլ կը հասնի»: Իմ երկիւղն աւելի սաստկացաւ 1812 թւին, երբ կայսրը գնաց Ռուսաստանի վրա: Փետրւարից սկսած մինչև մայիսի վերջը գունդ գնդի ետևից շարան-շարան անցնում էին մեր տան առջևով: Դրագուններ, հուսարներ, թնդանօթածիգներ, բեռնաւորւած սայլեր անվերջ շարքերով անցնում էին մեր քաղաքով: Մօտ 600,000 մարդ ուղևորում էր դէպի Ռուսաստան: Բացի Ֆրանսիացիներէից, դրանց մէջ կային իտալացիներ, հօլլանդացիներ, լեհեր:

Վերջապէս 1812-ի մայիսի 10-ին մեր քաղաքով անցաւ և ինքը՝ Նապօլէօնը, որ զօրքի ետևից դիմում էր դէպի Ռուսաստան:

Վաղ առաւօտ էր. քաղաքում բոլորը քնած էին, երբ որոտաց առաջին թնդանօթը և իմ փոքրիկ լուսամուտները թմբուկի նման ցնցեցին: Նոյն ընթացքին ձերուհի Գուլդէնը, մօմը ձեռին, բաց արեց սենեակիս դուռը և ասաց ինձ.

—Վեր կաց... նա գալիս է:

Հասկացայ, որ կայսրն էր անցնում:

Մենք բաց արինք լուսամուտը: Դեռ մութն էր: Հարիւրաւոր դրագուններ աղմուկով ու գղրգոցով մըտնում էին քաղաքն ու անցնում: Նրանցից մի քանիսի ձեռքին կային վառած կերոններ: Նրանք կարգով անցնում էին մեր լուսամուտի առջևով՝ կերոններով լուսաւորելով ձանապարհները և տների լուսամուտները:

Ամեն կողմից լսում էին անվերջ աղաղակներ. «Կեցցէ՛ կայսրը, կեցցէ՛ կայսրը»:

Դրագունների ետևից գալիս էր մի մեծ զինուորական կառք: Ես նայում էի կառքին, երբ նրա պատուհանից դուրս ցցեց մի մեծ, գունատ ու խոշոր գլուխ, մի փունջ մազ վրան: Դա Նապօլէօն կայսրն էր: Նա ձեռքն այնպէս էր բարձրացրել, որ կարծես քթախոտ էր ուզում քաշել, և մի քանի խօսք ասեց կառքի կողքից գնացող սպային:

Ահա բոլորը՝ ինչ որ ես տեսայ:

Երբ ամեն ինչ հանդարտեց, հրացանաձուլութիւնը դադարեց, ես ու պ. Գուլդէնը լուսամուտից հեռացանք: Ծերունին հարցրեց ինձ.

—Տեսար:

—Այո, պ. Գուլդէն:

—Է՛հ,—ասաց նա,—այդ մարդու ձեռին է մեր բոլորիս կեանքը. մի փչելով նա կարող է մեզ մոխիր դարձնել:

Մի ընթացքին նա աւելացրեց.

«Է՛հ, սկսենք աշխատել. արդէն ժամը 2-ը խփեց»:

Այդ օրւանից սկսած մինչև սեպտեմբերի վերջը եկեղեցում անընդհատ մաղթանքներ էին կատարում և ամեն անգամ թնդանօթի 21 որոտը հնչում էր որ և է յաղթանակի առիթով, որովհետև այդ ժամանակ մերոնք իրար ետևից ձախտամարտներ էին տալիս և յաղթում: Եւ ամեն անգամ լսելով թնդանօթի ձայնը, ձերունի Գուլդէնը բացականչում էր.

—Լսում ես, Ժօղէֆ. էլի նոր յաղթութիւն. խիլ են թշնամուց 25 դրօշակ, 100 թնդանօթ, իսկ մեզանից կոտորւած է 50,000 մարդ... Մէկ էլ տեսար՝ նորից սկսեցին զօրք ժողովել, որ սպանւածներին փոխարինեն:

Սիրտս ճմլուում էր, երբ այդպիսի խօսքեր էի լսում, և ամեն անգամ ծերունի Գուլղէնին մի և նոյն հարցն էի տալիս.

— Ի՞նչ էք կարծում, պ. Գուլղէն, եթէ նորից զօրք ժողովեն, կաղերին էլ կը տանեն:

Նա տեսնում էր իմ անհանգստութիւնը և խղճալով ինձ վրա՝ աշխատում էր հանգստացնել:

Հեշտ է հասկանալը, թէ ես իմ կողմից ի՞նչպէս ուզում էի խաղաղութիւն:

Վերջապէս 1812-ի սեպտեմբերի 15-ին յայտնեցին, որ մերոնք Մօսկվա են մտել:

Մի շաբաթ յետոյ լուր առանք, որ ուսմներն այրել են Մօսկվան և մերոնք դուրս են եկել այնտեղից ու ետ են նահանջում դէպի Լեհաստան: Բոլոր դէմքերը տխուր և զոհնատ էին. ամենքն էլ սպասում էին նամակի իւրայիններից: Այո՛, շատ վիշտ ու կսկիծ պատճառեց այդ պատերազմը:

II

Արդէն 5 ամիս էր որ ես մտածում էի մի փառահեղ ընծայ տալ Կատարինէին իր տօնի օրը, ղեկտեմբերի 18-ին: Մեր խանութի լուսամուտում ցուցադրած բոլոր ժամացոյցների մէջ կար մի սիրուն, փոքրիկ ժամացոյց արծաթէ փականքով: Նրա թւատախտակի, կամ ցիֆերքլատի վրայ նկարած էր մի սիրահար զոյգ: Երիտասարդն առաջարկում էր աղջկան մի փունջ ծաղիկ, իսկ աղջիկը, աչքերը խոնարհեցրած, ձեռքը մեկնում էր դէպի նա: Ես խիստ հաւանում էի այդ ժամացոյցը և մտածում էի, ինչպէս էլ որ լինի, մի կերպ գնել ունրէի-

րել Կատարինէին: Պատրաստ էի գիշեր-ցերեկ աշխատելու, միայն թէ կարողանայի փող հաւաքել գնելու համար: Մինչև ժամը 7-ը ես պէտք է աշխատէի պ. Գուլղէնի համար, իսկ յետոյ կարող էի աշխատել ինձ համար: Յաճախ մեզ բերում էին հին ժամացոյցներ կարկատելու, մաքրելու և ուղղելու: Դա հեշտ բան չէր, իսկ ծերունի Գուլղէնն այդպիսի գործերի համար ինձ շատ լաւ էր վարձատրում: Բայց իմ ընտրած ժամացոյցը շատ թանգ էր—35 Փրանկ: Այդպիսի մի խոշոր զուամար հաւաքելու համար ես շատ գիշերներ պիտի աշխատէի:

Վախենալով, որ մի ուրիշը կարող է գնել նոյն ժամացոյցը, ես ասացի պ. Գուլղէնին, որ չըծախէ, որ ըովհետև արդէն գնող կայ: Եւ այդպէս՝ գիշեր-ցերեկ աշխատելով՝ ես մտածում էի միայն Կատարինէի և իմ տալիք ընծայի մասին:

Մինչ այդ՝ ձմեռը վրա հասաւ սովորականից շուտ և այն էլ մի չափազանց ցուրտ ձմեռ: Աշխատելով և ականջ դնելով վառուղ փայտերի ճայթճաթիւնին, պ. Գուլղէնը յաճախ յանկարծ կանգ էր առնում և, նայելով քրտնած ապակիներին, բացականչում էր.

— Խեղճ, խեղճ մեր զինուորներ:

Եւ նա այդ ասում էր այնպիսի խոր թախիծով, որ սիրտս ճմլուում էր: Ես պատասխանում էի նրան.

— Երևի նրանք այժմ Լեհաստանումն են, տաք գօրանոցների մէջ: Ո՞վ կարող է դիմանալ այսպիսի ցրտերն:

— Այսպիսի ցուրտ, — ասում էր նա. — բայց սա ի՞նչ ցուրտ է, համեմատելով Լեհաստանի և Ռուսաստանի ցրտերի հետ: Դեռ փառք պէտք է տալ Աստծուն, եթէ մերոնք յարմար ժամանակին հեռացել են: Տէր Աս-

տւած, որքան ծանր է այն մարդկանց պարտականութիւնը, որոնք յանձն են առել ղեկավարել ուրիշներին:

Այն ինչ մօտենում էր Կատարինէի անւանակոչութեան օրը: Ես արդէն հաւաքել էի 35 ֆրանկը, միայն չըգիտէի, թէ ի՞նչպէս յայտնեմ տիրոջս; որ ժամացոյցը ես եմ առնում:

Հէնց որ բերանս բաց արի, պ. Գուլդէնը իսկոյն հասկացաւ, թէ բանն ինչու՞ն է, և ասաց ինձ ժպտալով.

— Լաւ, լաւ, հիմա հասկանում եմ. վաղը Կատարինէի տօնն է: Ա՛յ թէ ի՞նչու գիշեր-ցերեկ աշխատում էիր...:

Նա վեր առաւ փողը, պահարանից մի գեղեցիկ շղթայ հանեց, կպցրեց ժամացոյցին և այդ բոլորը դրեց մի սիրուն տուփի մէջ, որի ներսը վարդագոյն մետաքսէ կտորից էր:

— Սիրունիկնէր է, ժօզէֆ, — ասաց նա՛ ժամացոյցըն ինձ տալով: — Նա շատ լաւ աղջիկ է: Հիմա մենք կարող ենք ընթրել. սեղանը սարքերի, իսկ ես սուսը կը բերեմ:

Մեր ընթրիքը տեւեց մինչև ժամը 10-ը. յետոյ փայտ լցնելով վառարանը, գնացինք քնելու:

Հետեւալ առաւօտը ես դարթնեցի ժամը 6-ին: Սաստիկ ցուրտ էր և պատուհանս ծածկւած էր եղեամի հաստ շերտով: Ամենևին չէի ուզում տաք տեղաշորերիցս դուրս գալ: Սակայն յիշեցի, որ դեկտեմբերի 18-ն էր, և իսկոյն վեր թռայ, վազեցի դէպի վառարանը, որի մէջ միշտ մինչև առաւօտ կրակ էր մնում, փայտ նետեցի մէջը, կրակը բորբոքեցի և նորից անկողինս մտայ:

Պ. Գուլդէնը, վերմակի տակ թաղնելով, ձայն

տեւեց, որ այդպիսի ցուրտ արդէն 40 տարի է տեսնուած չէ:

Ես հագնեցի և արդէն ուզում էի դուրս գալ, երբ վարպետս ինձ ետ կանչեց՝ ասելով, որ հագնեմ իր մուշտակը, որովհետև այդպիսի ցրտին կարելի է սառչել, և որ երէկ գտել են մի սառած զինւորի դիակ:

Ճշմարիտ, այնպէս կատաղի ցուրտ էր, որ կարծես օդում թռչկոտում էին ասեղներ և ծակոտում մարդու մարմինը: Մինչև «Չորս Քամիներ» գիւղը համարեան բոլոր ճանապարհը ես վազելով էի գնում և միայն այն միտքը, որ շուտով տեսնելու եմ հարսնացւիս, տաքացնում էր ինձ:

Այն ի՞նչ բաղդաւոր օր էր, որ ես անցկացրի Գրէդէլ մօրաքրոջ փոքրիկ տնակում:

Պէտք էր տեսնել, թէ Կատարինէն ի՞նչպէս ուրախացաւ՝ ժամացոյցը տեսնելով, իսկ Գրէդէլ մօրաքրոյրը, նւէրը գննելով, ասաց.

— Ե՛կ, համբուրիր ինձ, ժօզէֆ, հասկանում եմ, թէ որքան աշխատանք պէտք է թափէիր, որ այս ժամացոյցը ձեռք բերէիր: Դու լաւ աշխատաւոր ես... Եւ մենք պարծենում ենք քեզանով:

Ձարմանալի ուրախ էի ես այդ օրը:

Ճաշից յետոյ Կատարինէն մի քանի սաղմոս երգեց և երբ մութն ընկաւ, մենք նստեցինք վառարանի առաջ՝ իրար ձեռք բռնած: Ես պատրաստ էի մինչև առաւօտ այդպէս նստել և տեղիցս չը շարժել: Այդպէս անցաւ մօտ կէս օր, երբ մօրաքրոյր Գրէդէլը ձայն տեւեց:

— Էէ՛հ, ժօզէֆ, ժամանակ է գնալու. լուսինը միայն կէս գիշերին դուրս կը գայ, իսկ այժմ շուտով կը մթնի: Այսպիսի գիշերները շատ դժբախտութիւններ կարող են պատահել:

Այդ խօսքերը սիրտս ճմլեցին, այն ինչ Կատարինէն այդ ժամանակ ձեռքիցս քաշում էր և չէր թողնում, որ վեր կենամ: Իսկ մօրաքոյր Գրէդէլը չէր լուում:

— Բաւական է, — ասաց նա, — վեր կենալով և մուշտակս մեխից վայր առնելով: — Գնա, կիրակի օրն էլի կը գաս:

Մնում էր՝ հագնւեմ և դուրս գամ:

Վազելով տուն հասայ և կանգ ստայ միայն մեր դռան առաջ, սանդուխները բարձրանալիս: Երբ սենեակի դուռը բաց արի, տաքութիւնը տեսց երեսիս: Պ. Գուլդէնը նստած էր բազկաթոռի վրա, վառարանի առաջ, ձեռքերը դրած ծունկներին:

Մի քանի բոպէ յետոյ նա հարցրեց ինձ.

— Ուրախ անցկացրիք, Ժօզէֆ:

— Այո, ուրախ անցկացրինք. մօրաքոյր Գրէդէլը և Կատարինէն բարևում են ձեզ:

— Լաւ, լաւ, — ասաց նա, — երիտասարդները կարող են ուրախանալ, իսկ ձեր մարդուն ալ ևս ոչինչ չէ ուրախացնում: Նա այնքան անարդարութիւններ, անգըթութիւններ և վիշտ է տեսել, որ ուրախանալն արդէն իր ուժերից վեր է:

Կարծես այդ բոլորը նա ինքն իրան էր ասում. երբէք նրան այդպէս տխուր չէի տեսել:

— Հիւանդ էք, պ. Գուլդէն:

Բայց նա, չը պատասխանելով ինձ, շնչաց.

— Այո՛, այո՛, ինչո՞ւ տարաւ նա խեղճերին այնտեղ: Ահա քեզ և մեծ բանակը, անս և փոքրը:

Նա թափ տեսց գլուխը և մտախոհ թեքեց դէպի կրակը՝ յօնքերը կիտելով: Ես չը գիտէի թէ ինչ անեմ, բայց նա գլուխը բարձրացնելով՝ ասաց ինձ.

— Այս բոպէիս, Ժօզէֆ, Ֆրանսիայում 400 հազար ընտանիք լաց է լինում: Մեր բանակը ոչնչացել է Ռուսաստանում. այն բոլոր կտրիճ երիտասարդները, որոնք անցան մեր մօտով երգով, նւագներով ու թըմբկահարութիւնով, այն բոլորը թաղած են ձիւների տակ: Հազիւ մերոնք սկսել են ետ նահանջել Մօսկվայից, երբ ցուրտն ու սովը հազարներով զոհեր են տարել նրանցից: Բերեօզինա գետն անցնելիս՝ ուռնները վրա են տւել և մնացածներին ջարդել: Կայսրը կարողացել է ազատուել: Այդ լուրն այսօր ճաշից յետոյ ստացւեց, յիշելն անգամ զարհուրելի է:

Նա նորից կախեց իր սպիտակ գլուխը և մենք երկուսս էլ երկար ժամանակ լռեցինք:

III

Հետեւեալ առաւօտ, երբ ես մտայ վարպետիս սենեակը, նա դեռ պարկած էր անկողնում. խնդրեց, որ իր փոխարէն ես գնամ ժամացոյցներ ուղղելու զանազան մարդկանց մօտ:

Հրապարակի անկիւնում ես ականատես եղայ մի այնպիսի տեսարանի, որ մինչև կեսնը լի վերջը չեմ կարող մոռանալ: Այնտեղ պատից կախւած էր մի թերթ թուղթ, որի վրա նկարագրւած էր այն ամենը, ինչ որ այդ օրերը պատահել էր Ֆրանսիական զօրքին: Թղթի մօտ հաւաքւել էր 500-ի չափ մարդ գիւղացի ու քաղաքացի, ձեր և երիտասարդ: Նրանք բոլորն էլ մեռելի նման գունատ էին: Նրանք բարձրանում էին իրար վրա՝ յայտարարութիւնը կարդալու համար: Երբեմն լսում էին հետեւեալ խօսքերը.

—Մի՞թէ բոլորն էլ մեռել են... Մի՞թէ ոչոք չը պէտք է վերադառնայ...

Միւսներն աղաղակում էին.

—Ոչինչ չենք տեսնում... մօտենալ չէ կարելի. Քրիստոսի սիրո՞ւ համար՝ թողէք տեսնենք:

Մի պառաւ, ձեռքերը վեր բարձրացնելով, բղաւեց.

—Քրիստափո՞ր... զաւակս... խեղճ Քրիստափորս...

Ուրիշներն էլ, կարծես նրա աղաղակներից գայրահարով, ասում էին.

—Հրամայեցէք այդ ճղճղան կնոջ ձայնը կտրել:

Բոլորն էլ իրանց վշտով տոգորւած՝ չէին ուզում իմանալ ուրիշի դժբախտութիւնը. ամեն մէկը մտածում էր լոկ իւր մասին... սարսափելի էր: Այն ինչ ժողովուրդն անվերջ հաւաքում էր քաղաքի զանազան ծայրերից. յայտարարութեան առջև ամբոխն զգալի կերպով աճում էր: Վերջապէս մի պարոն դուրս եկաւ ամբոխի միջից և, կանգնելով սանդուխների վրա, սկսեց բարձր ձայնով կարգալ յայտարարութիւնը: Նրա մէջ կայսրը պատմում էր, որ ամեն գիշեր հազարներով ձիեր էին կոտորւում. մարդկանց մասին նա ոչինչ չէր ասում: Պարոնը կարգում էր հանդարտ: Տիրում էր խորին լուռութիւն, որը երկար տևեց. բայց երբ սկսեցին կարգալ բանակի դժբախտութեան մասին, ամեն կողմից ձի ու հառաչանք լսեց: Երկու-երեք կիներ ու շագնաց եղան. նրանց թևերից բոնելով՝ տարան:

Բոլորը ախուր-արտում ցրւեցին. նրանց տեղը բռնեցին ուրիշները: Եւ էլի նորից մէկն ու մէկը դուրս էր գալիս ու բարձր ձայնով կարգում յայտարարութիւնը: Այդ ընթացքանութիւնը շարունակեց մինչև երեկոյ: Ես փախայ, որովհետև այլ ևս ոյժ չունէի տես-

նելու այդ ամենը: Գնացի ծերունի Ֆէրէլի մօտ՝ ժամացոյցն ուղղելու: Ռուսաստան գնացած զօրքի մէջ գտնուում էին նրա երեք որդիները—Ժանը, Լիւզվիգը և Ժօրժը:

Ես առաջուց երևակայում էի, թէ ի՞նչ է լինելու ծերունի Ֆէրէլի վիճակը. բայց այն, ինչ որ տեսայ՝ մտնելով նրա սենեակը, առաջուց չէի կարող երևակայել: Կոյր և բոլորովին ճաղատ՝ դժբախտ ծերունին նստած էր բազկաթոռի մէջ՝ վառարանի մօտ. գլուխը քաշ արած, անմտօրէն նայում էր առջևը, կարծես ոտների տակն ընկած լինէին իր որդիները: Նա ոչ մի բառ չէր արտասանում, բայց քրտնքի խոշոր կաթիլները գլորւում էին ճակատից այտերի վրայ. երեսն այնպէս գուշատ էր, կարծես մեռած լինէր:

Ես շտապեցի ուղղել ժամացոյցը և հեռանալ: Սիրտս կտոր-կտոր էր լինում, նայելով այդ դժբախտ ծերունուն:

Տուն վերադառնալով, ես գտայ պարոն Գուլդէնին դազգահի մօտ կանգնած:

—Եկա՞ր, Ժօզէֆ,—ասաց նա.—Տը, ի՞նչ կայ:

—Ա՛խ, պ. Գուլդէն, ինչ լաւ եղաւ, որ դուք չը գնացիք. զարհուրելի բան էր:

Եւ ես մանրամասնաբար պատմեցի նրան բոլորը: Երբ մենք ճաշի նստեցինք, եկեղեցու զանգերը հնչեցին:

—Երևի քաղաքում մի մարդ է մեռել,—ասաց պ. Գուլդէնը:

Տասը բոպէ չանցած, եկաւ պ. Ռօզը, որ իր ժամացոյցի ապակին դնել տայ:

—Այդ ո՞վ է մեռել,—հարցրեց նրան պ. Գուլդէնը:

—Ծերունի Ֆէրէլը:

—Ի՞նչպէս, ծերունի Ֆէրէլը:

— Այն, կէս ժամ թէ 20 րոպէ առաջ ծերունի Դէմէրէն և ուրիշներն ուզում էին նրան մխիթարել, բայց նա խնդրել է նրանց կարգալ իր համար իր որդու՝ դրագուն ժօրժի վերջին նամակը, որի մէջ նա գրում էր, թէ գարնանը յոյս ունի վերադառնալ և գրկել իր ծերունի հօրը: Լսելով նամակը նա յանկարծ ուզեցել է վեր կենալ, բայց վայր է ընկել անշնչացած. նամակը պատուել էր նրա սիրտը:

Պ. Բօզը գնաց և մենք լուռ շարունակեցինք ճաշը: Յունւարի 8-ին քաղաքային ոստիկանատան պատին մի ահագին յայտարարութիւն կպցրին, որից մենք իմացանք, որ կայսրը նոր զօրաժողով է անում: Պրուսացիները, վախենալով մեղանից, միացել են ուսաների հետ և նրա համար կայսրը նոր զօրք է ժողովում որ ուղարկէ Գերմանիա՝ ուսաների և պրուսացիների դէմ: Երբ ապակեգործ Փազը եկաւ և պատմեց մեզ այդ նոր յայտարարութեան մասին, ես համարեա անզգայ՝ վայր ընկայ, մտածելով.

— Այժմ տանում են և՛ ընտանիքի հայրերին. ես կորած եմ:

Պ. Գուլդէնն ինձ վրա ջուր սրսկեց. ձեռներս թուլացել էին, իսկ ինքս մեռելի նման գունատ էի:

Միևնոյն օրը գնացի մօրաքոյր Գրէդէլի մօտ, որին պտայ բարկութիւնից գունատեաձ, իսկ Կատարինէին՝ լաց լինելիս: Նրանք արդէն գիտէին նոր զօրք ժողովելու մասին:

Մենք լուռ համբուրեցինք: Մօրաքոյր Գրէդէլը սպիտակ մազերն ականջների ետևը նետելով՝ սկսեց խօսել գայրազին.

— Դու չես գնալու... Մենք ի՞նչ գործ ունենք պատերազմի հետ: Քահանան ինքն էր մեզ ասում, որ

արդէն բաւական է պատերազմել, պէտք է վերջապէս խաղաղութիւն հաստատել: Դու պէտք է մնաս: Լաց մի լինիր, Կատարինէ. ասում եմ քեզ, որ նա կը մնայ: Վաղուց է ինձ զղեցրել այդ սարսափելի արիւնհեղութիւնը, — ասում էր նա՝ բարկութիւնից կապտելով և շտապ-շտապ ամանները լւանալով: — Բաւական չէ որ գնացին մեր Գասպարն ու Իօկէլը, այժմ էլ երիտասարդներին են տանում: Ռուսաստանում կոտորած 300,000 մարդը նրանց հերիք չարեց, ի՞նչ է:

— Կամաց խօսեցէք, մօրաքոյր Գրէդէլ, — ասացի ես՝ նայելով պատուհանից դուրս. — կարող են լսել ձեզ, և այն ժամանակ բոլորն էլ բանն էլ վատ կը լինի:

— Է՛հ, ի՞նչ ի՞նչ. ես ասում եմ, որ լսեն, — պատասխանեց նա: — Ես չեմ վախենում քո Նապօլէօնից. նա հէնց նրանով սկսեց, որ ամենից առաջ մեզ արգելեց խօսել, որպէս զի ինչ որ ուզի, անէ... Չէ՞ որ այս բոլորին վերջ պէտք է լինի... Միայն մեր գիւղում 4 երիտասարդ կին զրկոււմ են իրանց ամուսիններից և 10 երիտասարդ թողնում են բոլորը՝ չը նայելով ոչ հօր, ոչ մօր, ոչ ճշմարտութեան, ոչ Աստծուն, ոչ էլ կրօնին: Մի՞թէ դա զգուցի չէ:

Նա դեռ երկար խօսում էր այդպէս, իսկ ես ու Կատարինէն չէինք համարձակուում իրար նայել, որ չը լինի թէ արտասուենք: Մեր երկուսիս էլ մտածմունքն էր, որ կարելի է շուտով իրարից բաժանուենք:

Տուն վերադառնալիս ես լսեցի, թէ ինչպէս փողոցի անկիւնում կարդում էին մի յայտարարութիւն, որից իմացայ, որ զօրաժողովը նշանակեաձ է ամսի 15-ին:

Այն օրն արդէն ամսի 8 էր. կը նշանակի մինչև զօրաժողովը մնացել էր 7 օր: Ես եկայ տուն բոլորո-

1008
35-261

վին անխրատ և ամեն ինչ ասացի վարպետիս: Վիճակահանութիւնը պէտք է լինէր հետևեալ հինգշաբթի օրը:

— Ըր՛, — նկատեց նա, — նրանք ժամանակ չեն կորցնում... նրանց գործը շատ շտապով է...

IV

Այդ ամբողջ շաբաթը ես անց կացրի սարսափելի աննշանքների մէջ, այնպէս որ հինգշաբթի առաւօտը հիւանդ էի: Նորակոչների ազգականները նախանձում էին ինձ, ասելով: «Այ թէ բախտաւոր է. հազիւ է շունչ քաշում. ի՞նչ բախտաւոր մարդիկ կան աշխարհում»:

Ընդունելութիւնն սկսեց ժամը 9-ին: Ես ֆրակա հագայ և ուզում էի գնալ, երբ ներս մտան մօրաքոյր Գրէդէլն ու Կատարինէն:

— Դէհ, Ժօզեֆ, ժամանակ է գնալու, — ասաց Գուլդէնը: — Չըվշտանաք, չըվախենաք. այս վիճակահանութիւնը միայն ձեի համար է: Արդէն վաղուց է, որ ոչոք չի ազատուում, իսկ եթէ ազատուում էլ է, Յ տարուց յետոյ անշուշտ վիճակն ընկնում է: Բոլոր համարներն էլ գնալու համարներ են: Ես կը ինդրեմ պ. կօմէսիւրանտից, որ միջնորդէ քեզ ազատելու համար:

Իրանից յետոյ ես դուրս եկայ Կատարինէի և մօրաքոյր Գրէդէլի հետ և անցանք հրապարակով, ուր հաւաքւած էր ժողովուրդը: Բոլոր խանութներում վխտում էին նորակոչները, որոնք ժապաւէններ էին գնում գլխարկներին կպցնելու համար: Նրանցից մի քանիսը լաց էին լինում, իսկ մեծամասնութիւնը կատաղութիւնից գորգոռալով երգ էր երգում: Բոլոր ճա-

նապարհները լիքն էին նորակոչներով: Նրանք լի բաժակներով գինի էին կոնծում և հեկեկալով իրար էին փաթաթուում, կամ յանկարծ սկսում էին բղաւել կամ երգել... Ամբողջ շրջակայքից նազաճուռները հաւաքւել էին Պֆայցբուրգ և ամուսն էին ճանապարհների վրա: Սարսափելի էր լսել, թէ ինչպէս երգն ու նւագը միախառնուում էին սուգի ու հեծեծանքի հետ:

Ջօրանոցների դիմացը ես հեռւից նկատեցի մանրավաճառ Պինակլին, որը բաց էր արել իր ժապաւէնների արկղը և ծախում էր նորակոչներին:

Այն րոպէին, երբ մենք բարձրանում էինք սանդուխներով, վերևից ցած էր գալիս դարբին Կլիպֆելը. նա հանել էր № 8-ը և հեռւից բղաւում էր:

— Սև ժապաւէն, Պինակլ, սև ժապաւէն տուր ինձ: Նա քաթանի նման գունատ էր և ծիծաղում էր: Նրա ետևից հեկեկալով գնում էր փոքր եղբայրը՝ Ժանը, և բղաւում էր:

— Ոչ, Ժան, ոչ, սև ժապաւէնը հարկաւոր չէ: Բայց Պինակլը դարբինի գլխարկի վրա արդէն կապել էր ժապաւէնը, իսկ նա շարունակում էր գորգոռալ և ծիծաղել...

— Այ թէ ի՞նչ է հարկաւոր այժմ մեզ... մենք բոլորս էլ մեռելներ ենք... Մենք մեզ համար սուգ պէտք է կապենք:

Մենք վերև բարձրացանք, մտանք մի մեծ սեւեակ, որտեղից դուրս էին գալիս գունատ նորակոչներ՝ կպցնելով իրանց համարները գլխարկներին: Անորդի կպցնելով իրանց համարները բղաւում էին հատեանից լսում էին ձայներ. բարձր բղաւում էին համարները, կարծես դատապարտութեան վճիռներ լինէին: Եւ ճիշտ որ — բոլոր համարներն էլ մի-մի դատապարտական վճիռ էին:

Մենք երկար սպասեցինք, արիւնս սառեց երակներունս, երբ վերջապէս բղաւեցին իմ անունը: Գնացի— ոչինչ չը տեսնելով և ոչինչ չը լսելով: ձեռս կոխեցի արկղը և համարը հանեցի:

Մի մարդ բղաւեց. «տասնեօթներորդ համար»:

Չեմ յիշում, թէ ինչպէս ատեանից փողոց դուրս եկայ: Երբ մենք հասանք հրապարակ, ուր աւելի ազատ ու հանդարտ էր, ես յիշեցի, որ հանել եմ 17-դ համարը:

—Ո՞րն է համարդ,—հարցրեց ինձ պ. Գուլդէնը, հէնց որ ներս մտանք սուրն:

—17-ը,—պատասխանեց մօրսըրըրը նստելով:

Իա մի ըոպէ անհանգստացրեց ձերունուն, բայց յետոյ նա ասաց:

—Երբ վերաքննիչ խորհուրդը կը լինի, ես կը գնամ կօմէնդանտի մօտ խօսելու: Ամբողջ քաղաքը գիտէ, որ ժօզէֆը կաղ է: Այժմ դարդ մի անէք, խնդաւորե՛ք...

Բարի Գուլդէնը հանգստացրեց մօրաքոյր Գրէտէլին և Կատարինէին. նրանք տուն վերադարձան՝ յոյսի մի նշոյլ սրտերում. բայց ինձ այդ բոլոր մխիթարութիւնները չը կարողացան հանգստացնել—սիրտս շատ անհանգիստ էր:

Յորհրդի նախընթաց օրը պ. Գուլդէնը հազաւ իր նոր, շագանակագոյն սիւրտուկը, և ուղևորեց պ. կօմէնդանտի մօտ՝ ժամացոյցն ուղղելու: Նա վերադարձաւ ուրախ դէմքով և ինձ ասաց, որ ոչնչից չը վախենամ: Վարպետիս խօսքերն ինձ հանգստացրին, և ես այդ գիշերը քնեցի մեռածի նման:

Հետևեալ օրը նախկին երկիրը կրկին պատեց ինձ: Վախենալով, որ ինձ առողջ մարդու տեղ կընդունեն, վարպետիս ոչինչ չը յայտնելով, մի ամբողջ սրակ քա-

ցախ խմեցի, որովհետև լսել էի, որ քացախից մարդ սաստիկ գունատուում է: Բայց երբ մտայ Գուլդէնի սենեակը, նա նայեց ինձ և ազամայ բացականչեց...

—Ժօզէֆ, ի՞նչ է եղել քեզ. կարմրել ես աքաղաղի նման:

Հայելուն նայելով, տեսայ, որ երեսս կրակի նման կարմրել էր: Ես վախեցայ և յուսահատ բացականչեցի.

—Այժմ կորած եմ, երևի հիմա ինձ կը համարեն շատ առողջ մարդ, որովհետև քացախից արիւնս գլուխս է խփել:

—Ի՞նչ քացախից,—հարցրեց ձեր ժամագործը:

—Սրւակի քացախը խմեցի, որ գունատուեմ... Տէր Աստուած, ինչո՞ւ ես այդ արի...

—Ի՞նչ վատ ես արել, ժօզէֆ,—ասաց ինձ պ. Գուլդէնը.—սուտ խօսելը և խաբելը միշտ վատ է: Բայց շտապիր, ժամը 10-ին պէտք է խորհուրդ լինես:

Ճարս ի՞նչ. ստիպւած էի փնտրել խորհուրդ քացախից այլևո՞ղ այտերով: Մօրաքոյր Գրէտէլը և Կատարինէն սպասում էին ինձ փողոցում. նրանք հազիւ ճանաչեցին ինձ:

—Ինչ գոհ և ուրախ դէմք ունես,—ասաց ինձ մօրաքոյր Գրէտէլը:

Ես վեր բարձրացայ սանդուխներով, անիծելով իմ յիմարութիւնը: Վերևում իրանց անպէտք ձևացնող նորակոչներից 35 հոգի արդէն ընդունւել էին, այդքան էլ սպասում էին քննութեան հերթին:

Ներսի դուռը բացեց և մի ժանդարմ ձայն տուց.

—Ժօզէֆ Բէրտա:

Ես ներս մտայ, բոլոր ուժովս կաղալով: Երկու բժիշկ, սենեակի մէջտեղը կանգնած, խօսում էին:

Սեղանի շուրջը նստած էին մի քանի պարոններ: Բը-
ժիշկներից մէկը ետ նայեց և ասաց.

— Հանւեցէք:

Ես հանւեցի մինչև շապիկս, այդ էլ ժանդարմը
հանեց: Բժիշկները նայեցին ինձ և նրանցից մէկն ա-
սաց.

— Ա՛յ առողջ երիտասարդ:

Այս խօսքերը կատարեցրին ինձ, բայց ես ինձ
զսպեցի ու հանդարտ պատասխանեցի.

— Չէ՞ որ ես կաղ եմ, պ. բժիշկ:

Բժիշկներն սկսեցին համեմատել իմ ոտները, և մեր
հիւանդանոցի բժիշկը, որին երևի կօմէնդանտն ասել
էր իմ մասին, յայտնեց.

— Ձախ ոտը մի քիչ կարճ է:

— Բայց երիտասարդն առողջ է, — նկատեց միւս
բժիշկը:

Յետոյ ձեռքը դնելով կրծքիս, ասաց.

— Հիանալի կազմածք է: Ապա, մէկ հազացէք:

Ես հազացի որքան կարելի է թոյլ, բայց, չընա-
յելով դրան, նա գտաւ, որ ես ամուր կազմածք ունեմ,
և աւելացրեց.

— Նայեցէք, ինչպիսի գոյն ունի. իսկոյն երևում
է, որ արիւնն առողջ է:

Այդտեղ արդէն չը կարողացայ ինձ զսպել և ա-
սացի.

— Բայց չէ՞ որ ես քացախ եմ խմել:

— Հը՛մ, — ասաց նա. — Եթէ քացախ էք սիրում,
նշանակում է, որ լաւ ստամոքս ունէք:

— Բայց չէ՞ որ ես կաղ եմ, — յուսահատաբար ձայն
տւի ես:

— Հոգ մի անէք. խօսք եմ տալիս, — վրա բերեց

բժիշկը, — որ ձեր ոտը շատ ամուր է: — Ապա դառնալով
քարտուղարին, ասաց. «Ծառայութեան համար պի-
տանի է»:

Ես հազնւեցի և սարսափելի յուսահատութիւնով
դուրս եկայ փողոց. չը կարողանալով զսպել իմ վիշտը՝
բարձրաձայն հեկեկացի:

Ամեն ինչ վերջացած էր. ես պէտք է պատերազմ
գնայի:

V

Յունւարի 25-ի առաւօտեան, երբ ես ուզում էի
գնալ Կատարինէի մօտ, պ. Գուլբէնը, որ բանում էր
սեղանի մօտ նստած, ետ նայեց ինձ արտասուլիսաւ
աչքերով և ասաց, որ ես նշանակած եմ ճ-դ հետեակ
գնդում:

Մի քիչ լռելով, վարպետս աւելացրեց.

— Գուր ճամփայ էք ընկնելու այսօր, ժամը 11-ին:

— Ուրեմն ես այլ ևս Կատարինէին չեմ տեսնելու,

— բացականչեցի ես յուսահատաբար:

— Կը տեսնես, ժօզէֆ, կը տեսնես. ես մարդ եմ
ուղարկել իմաց տալու Գրէդէլ տատին և Կատարի-
նէին. երևի նրանք շուտով կը գան և դու նրանց հրա-
ժեշտ կը տաս այստեղ:

Ես հազիւ կարողացայ հեծկտանքս զսպել:

Մի ըրպէ յետոյ նա շարունակեց.

— Հոգ մի անիլ, ես արդէն ամեն ինչ պատրաստել
եմ քեզ համար: Իսկ երբ դու կը վերադառնաս, ժօզէֆ,
կը գաս կրկին ինձ մօտ. ինձ միշտ մի և նոյն մարդը
կը գտնես: Ես արդէն ծերանում եմ, և երջանիկ կըլի-

նէի, եթէ կարողանայի քեզ և Կատարինէին ընդունել իմ գաւաղների տեղ... Ես քեզ կը թողնէի իմ արհեստանոցը... Բայց ի՞նչ արած... Ասենք, ես յոյսս չեմ կտրում, որ դու կը վերադառնաս, սիրելի ժօղէֆ. չէ որ վերջապէս նրանք կը տեսնեն, որ դու երկար քայլել չես կարող:

Նա պահարանից հանեց մի կաշէ տոպրակ:

—Ահա քո տոպրակը,—ասաց նա.—սրա մէջ դրել եմ ինչ որ հարկաւոր է. մի քիչ սպիտակեղէն, տաք ֆլանէլ... պատուիրել եմ քեզ համար մի զոյգ էլ կօշիկ, —արքունական կօշիկներից էլ վատ բան ամենևին չը կայ. նրանք սաստիկ ծանր ու անյարմար են: Առանց այն էլ քո ոտները թոյլ են, խեղճ բարեկամս. այնպէս լինի, որ պոնէ ոտներդ չը ցաւեն: Դէհ, այսքանն էլ հերիք է:

Տոպրակը դրեց սեղանի վրա և ինքը նորից նստեց:

Ես չեմ նկարագրիլ սարսափելի հրաժեշտը Կատարինէի, մօրաքոյր Գրէդէի և ծերունի Գուլգէնի հետ: Հրաժեշտ տալով նրանց, ես բաժանուցի այն ամենից, ինչ որ թանգ էր ինձ համար այս կեանքում:

Միևնոյն օրը մենք ճանապարհ ընկանք: Եղանակը փչացաւ և սկսեց ձիւն գալ:

Մենք անցնում էինք բազմաթիւ գիւղերով, որոնք գտնուում էին կամ ժայռերի ծայրերին, կամ հովիտներում: Ամեն մի գիւղ մտնելիս, թմրկահարները քայլերդ էին թմրկահարում և գիւղի բնակիչները փողոց էին թափուում՝ ասելով. «Ահա գալիս են նորակոչները»: Երեկոները գիշերելու վայրերում մենք հաճութեամբ մեկնում էինք մեր յոգնած ոտները, մանաւանդ ես: Չեմ կարող ասել, որ իմ կարճ ոտն առանձնապէս ցա-

ւելիս լինէր, ոչ. ցաւում էին երկուսս էլ... Չէ որ առաջ ես այդքան շատ երբէք չէի ման գալիս: Ի՞նչ երջանկութեամբ ձգուում էի անկողնիս վրա: Ինձ թւում էր, թէ այդպէս կըքնէի ամբողջ օրերով: Բայց առաւօտեան կանուխ, լոյսը դեռ չը ծագած, մեզ զարթեցնում էին թմրուկներով և նորակոչները գժւածի նման վեր էին թռչում, շտապով հագնուում և արդէն մեկնելով՝ շնորհակալութիւն էին անում տանուտէրերին:

Երբէք չեմ մոռանում, թէ ինչպէս մեր դուրս գալու երկրորդ օրը պարկս բաց արի, որ մի մաքուր շապիկ հանեմ, և գտայ նրա մէջ մի փոքրիկ ծրար. բաց արի, տեսայ՝ 54 ֆրանկ փող և պ. Գուլգէնից մի փոքրիկ տոմսակ. «Միշտ բարի և ազնիւ եղիք, իմ ժօղէֆ,—գրում էր ինձ բարի ծերունին.—օտար երկրների բնակիչների հետ վարելը մարդասիրաբար, որովհետև նրանք էլ նոյնպիսի մարդիկ են, ինչպէս և դու, և մեր եղբայրներն են: Թող օրհնէ քեզ Աստուած: Նա քեզ կը փրկէ փորձանքից: Ուղարկում եմ քեզ ժօղէֆ, մի քիչ դրամ. ազգականներից հեռու, օտար երկրում երևի այդ փողը քեզ պէտք կըգայ: Գրիք, որքան կարող ես յաճախ: Համբուրում եմ քեզ, գաւակս»:

Այս տողերը կարդալով, իմ արտասուքները թափուեցին, և ես մտածեցի. «Դու անտէր չես... Կան բարի մարդիկ, որոնք մտածում և աղօթում են քեզ համար:

Վերջապէս հինգերորդ օրը երեկոյեան մենք մտանք Մայնց: Քանի կենդանի եմ, ես չեմ մոռանալ Մայնցում մեր այդ կանգ առնելը: Յուրտը սարսափելի էր. ամբողջ օրը՝ գիւղերով անցնելիս, մենք անդադար հանդիպում էինք զինուորների, բոլոր գիւղերը լցած էին զինուորներով: Ոտներս այնպէս էին ցաւում, որ հազիւ կարողացայ բարձրանալ վերջին լեռնանցքը:

Պառաւը վեր կացաւ, գնաց և շուտով վերադարձաւ մի տաք-տաք, թարմ գաթայ ձեռին: Միայն այդ ժամանակ զպցի, թէ որքան քաղցած էի. երբ գաթան տեսայ, քիչ մնաց ուշադնաց լինէի:

Պառաւն արդէն կուացել և իր գողնոցով ոտներս էր սրբում:

— Իսէր Աստծու, ի՞նչ էք անում,— բացականչեցի ես յուզած,— դուք ինձ հետ վարուում էք ինչպէս ձեր որդու հետ:

Պառաւն ինձ պատասխանեց փոքր ինչ լռելուց յետոյ.

— Մենք էլ մի որդի ունենք բանակում:

Լսեցի, թէ ինչպէս այդ բառերն արտասանելիս նրա ձայնը դողդողաց, և իմ սիրտը ձմւեց:

— Դէհ, սկսեցէք սուպն ուտել, իսկ ես այդ ժամանակ գաթան կը կտրատեմ,— ասաց ծերունին:

Ես ուտել սկսեցի այնպիսի բաւականութիւնով, որի նմանը մինչև այսօր էլ երբէք չեմ տեսել: Ծերերը մտախոհ նայում էին ինձ: Երբ կերայ պրծայ, ծերուկը, վեր կենալով, ասաց.

— Այն, մեր որդին բանակումն է. անցած տարի նա Ռուսաստան գնաց, և այնուհետև նրա մասին ոչինչ չենք իմացել... Այն, սոսկալի բան է պատերազմը:

Կարծես նա ինքն իրան էր խօսում, մտախոհ ետ ու առջ ման գալով սենեակում, ձեռքերը ետևը դրած: Իսկ ես զգում էի թէ ինչպէս աչքերս փակում էին և շուրջս ամեն ինչ կարծես լողում էր:

— Դէհ, մնաք բարով,— ասաց ծերունին: Եւ նա դուրս գնաց: Պառաւը գնաց նրա ետևից, տաշտը հետը տանելով:

— Շնորհակալ եմ,— կոչեցի ես նրանց ետևից:—

Ասուած տայ՝ ձեր որդին վերադառնայ:

Յետոյ հանւեցի և պառկեցի:

Դեռ լոյսը հաղիւ ծագած՝ մենք վեր կացանք և շարունակեցինք ճանապարհը:

VI

Շուտով մենք հրահանգ ստացանք կուի պատրաստուելու: Գնդում բոլորն ասում էին, որ մենք մօտենում ենք կուի տեղին: Կլիպֆէլը և Ջէրէդէն մի գլուխ խօսում էին, թէ ինչպէս պէտք է յարձակեն պրուսացիները վրա. իսկ այդ պատմութիւններն ամենակին իմ սրտովը չէին, թէև,— այժմ ամաչում եմ խոստովանել,— ես ամօթ էի համարում արտայայտել այդ բանը, և որպէս զի վախկոտ չերևամ և ուրիշներից ետ չը մնամ, ես էլ ասում էի, որ դա ինձ ուրախացնում է, և աշխատում էի բարի և ուրախ դէմք ընդունել:

Էրֆուրտում նամակ ստացայ, և իսկոյն իմացայ, որ Կատարինէիցն է: Դա ինձ այնպէս ուրախացրեց, որ հազիւ էի կանգնում ոտի վրա:

Ջէրէդէն և միւս պֆալցբուրգցիները շատ ուրախ էին, որ մի նոր բան պիտի լսեն Պֆալցբուրգից. նըբանք բոլորն էլ հաւաքւեցին լսելու իմ նամակը: Կարդալով, որ Կատարինէն աղօթում է ինձ համար, ես լաց էի լինում. հայրենակիցներս լսելով այդ, ասում էին.

— Երեւի անպատճառ մեզ համար էլ աղօթելիս կը լինեն:

Մէկը խօսում էր մօր, միւսը քրոջ, երրորդը նըշանածի մասին: Նամակի վերջում պ. Գուլդէնն աւելացրել էր, որ քաղաքում բոլորն էլ առողջ են, և խրա-

խուսում էր ինձ, որ համբերութեամբ տանեմ բոլոր թշուառութիւնները. նա ինձ յանձնարարում էր հաղորդել ընկերներէս, որ նրանց մասին մտածում են, և որ ազգականներն ու ծնողները դժգոհ են, որ նրանցից նամակ չեն ստանում:

Այդ նամակը շատ մխիթարեց մեզ բոլորիս: Եւ այժմ երբ ես յիշում եմ, որ մենք ստացանք այդ նամակը ճակատամարտն սկսելուց մի քիչ առաջ, նա ինձ թւում է իբր հրաժեշտ, որ մեր հայրենիքը տալիս էր մեզ. մեզանից շատերն այլ ևս ոչինչ չը լսեցին իրանց հայրենիքի մասին, իրանց ազգականների, բարեկամների և այս աշխարհում ունեցած բոլոր թանկագին էակների մասին:

Մարտի 18-ին, երբ մենք դեռ էրֆուրտումն էինք կանգնած, Պինտօ սերժանտը ասաց ինձ.

— Զինուոր Բերտա, կայսրը եկել է:

Ես հասկացայ, որ կարևոր փոփոխութիւններ են տեղի ունենալու:

Միևնոյն գիշերը մենք դուրս եկանք էրֆուրտից: Ժամը 9-ի մօտերը մենք կանգ առանք սուպ եփելու և հեռում լսեցինք հրացանի ձայներ. դա մեր հուսարներն էին, որ փողոցներում հանդիպել էին գերմանական հուսարներին և իրար վրա կրակ էին անում: Դա այնքան հեռու էր, որ մենք այդ կռիւը համարեալ չը տեսանք, բայց և այնպէս՝ տեղեկանալով այդ մասին, ես մի տեսակ վատ զգացի ինձ: Մենք այստեղ հանգիստ նստած սուպ ենք ուտում, իսկ մեր կողքին՝ այնտեղ, մարդիկ կոտորում են իրար:

Մենք նորից առաջ անցանք և մօտեցանք Վարտային: Այդտեղ առաջին անգամ տեսանք թշնամուն՝ կազակների մի ամբողջ զօրախումբ:

Մենք մօտեցանք գետին և բանակ դրինք փին բոլորովին մօտ: Գիշերը մենք սուպ եփեցինք. ոչ ոքի քունը չէր տանում: Զէրէդէն, Կլիպֆէլը, Ֆիւրստը և ես ուտում էինք մէկ ամանից, և ընկերներս ասում էին.

— Վաղը՝ գետն անցնենք թէ չէ, ցոյց կը տանք դըրանց: Պֆալցբուրգում այժմ մերոնք երևի չեն էլ կասկածում, որ մենք նստած ենք գետի փին թշուառութեան մէջ և կուրի նախօրէին քնում ենք սառած գետնի վրա:

— Ե՛հ, ինչ անենք,— ասաց Կլիպֆէլը. — իսկ իմ կարծիքով այսպէս ապրելն աւելի ուրախ է. վաղը փառաւորապէս կը տաքանանք:

— Այո՛, — ասաց Զէրէդէն, չիբուխը քաշելով. — գիտեմ, որ իմ ձեռքերը չեն յոգնիլ:

Ինձ համար անհաճոյ էր լսել, թէ ինչպէս էին նրանք այդ ասում, բայց վախկոտ չբերալու համար՝ ես ոչինչ չէի ասում և լուռ՝ սուպս էի ուտում: Յիշում եմ, այն ժամանակ մի զլուխ մտածում էի. «Մի թէ իսկապէս ես վախկոտ եմ, եթէ չեմ կարող անվրդով խօսել կուրի մասին և պարծենալ նրանով, թէ ինչպէս պէտք է կոտորեմ ռսներին»: Բայց յետոյ ես յիշեցի ծերունի Գուլդէնի խօսքերը և հանգստացայ, որովհետև գիտէի, որ այդ հիանալի մարդը պատերազմի մասին նոյն կարծիքի է, ինչ որ ես, և ինձ սկսում էր թւալ, որ թէ Կլիպֆէլը, թէ Զէրէդէն հոգու խորքում վախ են զգում և դիտմամբ են խօսում կուրի մասին, որպէս զի ոչ ոք չը տեսնի, չընկատի այդ ներքին երկիւղը:

Լուսադէմին ես քնեցի և այն էլ այնպէս պինդ, որ Կլիպֆէլը դժուարութիւնով կարողացաւ զարթեցնել: Ամեն կողմից կոչ էին անում: Մենք անցանք միւս ափը և, երբ առաւօտեան մշուշը փարատեց, մեր աջ

կողմում տեսանք մի քաղաք՝ մի դղեակով,—դա Վայ-
սէնֆէլսն էր:

Քաղաքի և մեր միջև ձգւած էր մի մեծ ձոր. մա-
րեշալ Նէյ ուզում էր նախ և առաջ իմանալ, թէ այդ
ձորում մի թակարդ չէ՞ սարքւած: Նա առաջ ուղարկեց
հրացանաձիգներ, իսկ մնացածները գնացին նրանց
ետեից հանդարտ քայլերով:

Ես երկրորդ շարժւողն էի, Ձէբէդէի ետեից, և աչ-
քըս ձորակիցը չէի հեռացնում:

Հրացանաձիգները բոլորովին մօտեցան ձորին,
որի ափերին խիտ թփեր էին բուսել: Դեռ դրանից մի
քանի բոպէ առաջ ես հեռուից նկատեցի, որ կարծես
մի բան փայլում էր, և մտածեցի. «Ձը լինի՞ թէ դրանք
ուռաներն են իրանց նիզակներով»: Իսկ երբ հրացա-
նաձիգները մօտեցան թփերին և երբ մի քանի տեղից
կրակ արին, ես համոզւեցի, որ իսկապէս՝ դրանք նի-
զակներ էին:

Նոյն բոպէին մեր դիմացը մի բան փայլեց, և ո-
րոտաց թնդանօթը: Դա ուսների թնդանօթն էր:
Շուրջս ամեն ինչ ալեկոծւեց. մի տարօրինակ աղմուկ
ստիպեց ինձ գլուխս դէպի ետ դարձնել, և ես տեսայ
ձախ կողմի շարքերում մի դատարկ տեղ:

Մի և նոյն ժամանակ գնդապետ Յէպֆէլն անվեր-
դով հրամայեց.

—Շարքերը խտացրէք:

Այդ բոլորն այնպէս արագ կատարւեց, որ ես չը
կարողացայ ուշքի գալ:

Եւ որովհետև ուռսական թնդանօթների ամեն մի
հարւածից յետոյ գնդապետն ասում էր. «շարքերը
խտացրէք»,—ես հասկացայ, որ ամեն մի անգամ պա-
կասում էին շատերը: Այդ միտքն ինձ սարսափելի

վրդովում էր, բայց և այնպէս պէտք էր առաջ գնալ:

Այլ ևս չէի համարձակւում շուրջս նայել և աշ-
խատում էի չը մտածել, երբ գեներալ Շըմինսօն ձին
քշեց մեր զօրասիւնի մէջը և որոտազին ձայնով գոչեց.

—Կանգնիր:

Այն ժամանակ առաջս նայեցի և ուռաներին ուղ-
ղակի իմ դիմացը տեսայ:

—Առաջին շարք... չորեքէք... սուխններդ առանջ,
—հրամայեց գեներալը:—Պատրաստուիր:

Որովհետև Ձէբէդէն չորեք, ես ինձ տեսայ կարծես
առաջին շարքում: Մինչև այժմ էլ աչքիս առաջն է, ինչ-
պէս ուռաների այդ ձիաւոր ամբոխը մերկացրած սրե-
րով սլանում էր մեզ վրա և ինչպէս մեր գեներալն
անվրդով ասում էր մեզ, կարծես հասարակ վարժու-
թեան ժամանակը լինէր:

—Հրամանս լսիր: Նշան դիր... կրակ արա՛:

Մեր չորս քառակուսիներն էլ միասին էինք կրակ
անում: Կարելի էր կարծել, որ ամբողջ աշխարհը կոր-
ծանւում էր: Երբ ծուխը մի քիչ փարատւեց, մենք տե-
սանք, որ ուռաները փախչում էին ինչքան որ ոյժ ունէին,
մեր թնդանօթները որոտում էին և գնդակները հաս-
նում էին նրանց ետեից: Ամեն կողմից հնչում էին
«կեցցէ կայսրը» աղաղակները: Կարծես բոլորն էլ
գժւել էին. ոչոք չը գիտէր, թէ ինչ էր կատարւում իր
շուրջը. ամեն մարդ աղմկում, բղաւում, կրակ էր ա-
նում: Իսկ ես այն էի մտածում, որ ամեն ինչ վերջա-
ցել է, այլ ևս կռիւ չի լինի, և ուրախութիւնից բղաւում
էի միւսների հետ միասին. «Կեցցէ կայսրը»:

Յանկարծ մեզնից երկու-երեք հարիւր քայլ հեռա-
ւորութեան վրա, ձորի միջից աղմուկ լսեց, և գեներալը
գոչեց.—Կանգնիր... չորքիր... սուխնները առանջ:

Չորից մեզ վրա էին սլանում ուսաները կատարելի փոթորկի նման: Նրանք առաջանից էլ աւելի էին, այնպէս որ երկիրը դողում էր նրանց ոտներէ տակ: Սկուեց կրակը: Կարծես թէ երազումն էի. լաւ չէի ըմբռնում, թէ շուրջս ինչ է կատարում և կրակ էի անում միւսներէ նման: Ռուսներէց մի քանիսը վազում, հասնում էին մեզ. ծուխի միջով երևում էր, թէ ինչպէս նրանք բարձրանում և էլի կորչում էին: Ես տեսնում էի, թէ ինչպէս նրանցից շատերն ընկնում էին. տեսնում էի շուրջս արիւն, և արձակում, արձակում էի...

Մի քանի րոպէ անընդհատ հրացանները լցնելուց ու արձակելուց յետոյ լսեց հրամանի ձայնը. «կրակը դադարեցնել»:

Բայց այդ հրամանին իսկոյն չը հնազանդեցինք. բոլորս էլ կարծես շտապում էինք մի անգամ էլ արձակել: Երբ ծուխը ցրեց, մենք տեսանք թէ ինչպէս ուսական հեծելազօրը բարձրանում էր ձորի միւս փը: Մենք սկսեցինք նահանջել դէպի քաղաքը: Ռուսները գնացին:

Ես ուրախացայ, որ այդ բոլորը վերջապէս վերջացաւ:

VII

Հետեւեալ առաւօտը, ժամը 5-ի մօտերը, մենք դուրս եկանք Վայսէնֆէլսից և անցանք գետը, միայն ոչ թէ կամուրջով, այլ ծանծաղուտով: Զուրը ծնկներէցս բարձր էր: Ես ակամայ մտածեցի, թէ ինչպէս Գուլդէնի մօտ ապրելիս, վախենում էի ոտներս թրջել, որ չը լինի թէ հարբուխ ստանամ:

Մենք դետեղեցինք Հէրշէն գիւղում: Լուր էր պտտում, որ մեզ սպասում է մի մեծ ճակատամարտ:

Դիւղի առջևի տափարակ թամբի վրա մենք երկու տեղ կրակ վառեցինք և սկսեցինք սուպ եփել. բայց բոլորս էլ այնպէս յոգնած էինք, որ մեծ մասն աւելի ուզում էր քնել, քան ուտել:

Սաստիկ յոգնածութիւնից ես էլ քնեցի, բայց դեռ քնիս մէջ երկար ժամանակ լսում էի մեծ ճանապարհով անցնող թնդանօթների ու ուղւթների սայլախմբի անիւնների աղմուկը:

Հէրշէնի ժամացոյցը խփեց ժամը 6-ը, երբ ես զարթնեցի: Կարծես թէ մէջքս ու ոտներս կտրւած լինէին, բայց զօրով վեր կացայ և կրակին մօտեցայ, որովհետև սաստիկ ցուրտ էր:

Ժամը 7-ի մօտ բոլորս ոտի վրա էինք: Մեզ բաժանեցին հաց և փամփուշտ:

Մենք բոլորովին գոհ էինք, և ոչ ոք չէր նախազգում այն զարհուրելի դէպքերը, որ այդ օրը պէտք է պատահէին: Մենք կարծում էինք, թէ ուսաները և պրուսացիները չը գիտէն, թէ մենք ուր ենք, և որոնում են մեզ մի ուրիշ տեղ, բայց շուտով հասկացանք, որ թշնամին մօտ է և ուզում է մեզ յանկարծակիի բերել, քանի դեռ մեր գլխաւոր ուժերը շարժւում էին դէպի Լայպցիգ:

Փողը փչեց, և մենք բոլորս վազեցինք առնելու հրացաններս: Թշնամին կանգ առաւ թնդանօթի երկու հարւածի չափ տարածութեան վրա, և ես տեսնելով ուսաների և պրուսացիների այդ անագին ամբօխը՝ մտածում էի, որ ամեն ինչ կորած է:

Գիտերալ Շըմիսօն ձիով անց կացաւ մեր առջևով և հրամայեց. «Քառակուսի կազմիր»:

Սկսեց կրակը: Պրուսացիները մեզ վրա գնդակի կարկուտ էին տեղացնում, իսկ ձախ կողմից նրանք մեզ վրա արձակում էին թնդանօթներից:

Մեր թնդանօթներն էլ որոտում էին անընդհատ, և սպաները մի գլուխ բղաւում էին. «խտացրե՛ւ շարքերը, խտացրե՛ւ»: Ես արդէն հասկանում էի, թէ ինչ է նշանակում այդ խօսքը, և կրճքիս տակ սիրտս հիւանդագին սղմւում էր, ու ես մտածում էի թախիծով ու յուսահատ. «Ինչո՞ւ եմ ես այստեղ: Ի՞նչպէս ընկայ այստեղ»:

Յանկարծ երկու բլուրների մէջտեղը, մեզանից մօտիկ, երևացին պրուսացիների առաջընթաց զօրասիւնները. մի բոպէ ևս, և նրանք ընկան մեր առջևի շարքերի վրա, և սկսեց սուխամարտը: Անհնարին, զարհուրելի տեսարան էր. մարդիկ իբար վրա էին ընկնում, կարծես կատաղած գազաններ լինէին, արիւնը հոսում էր առուններով, չորս կողմն ամեն ինչ բղաւում, մոնչում, հեծկտում, կոււում և արիւնթաթախ էր լինում: Այլ ես դիմանալու ոչ մի հնար չը կար, և մեզ հրամայեցին նահանջել: Այդ ընդհարումից յետոյ ես հազիւ կարողացայ սթափուել. լաւ չեմ յիշում թէ ինչ վիճակի մէջ էի կուլի ժամանակը, յիշում եմ երազի նման, որ կատաղութիւնից խեղդւում էի. կատաղած էի մեր դէմ եկող այդ թշուառ մարդկանց վրա, և ես կոււում էի, որքան ոյժ ունէի. ես բղաւում էի, բայց ի՞նչ, չեմ յիշում. գլուխս շմած էր, աչքերիս երևում էին կարմիր շրջանակներ, և տարուբերւում էի հարբածի նման: Սարսափում եմ, երբ յիշում եմ այժմ այդ դրութիւնը:

Մինչև այժմ չը գիտեմ, թէ ինչպէս դուրս եկանք այնտեղից. մենք գնում էինք, ծուխի մէջ ոչինչ չը տեսնելով, պաշտպանւելով սուխներից և սրերից: Ես

յիշում եմ միայն, որ Ձէրէդէն անդադար բղաւում էր ինձ. «Գնանք, գնանք», և որ վերջապէս մենք դաշտուսն էինք:

— Հրացանները լցրէ՛ք, — ասաց մեզ սէրժանտ Պինտօն:

Լցնելիս՝ տեսայ սուխիս վրա արիւն և մազեր, որոնք ցոյց էին տալիս, որ ես զարհուրելի հարւածներ էի տուել:

Մի բոպէ յետոյ սէրժանտ Պինտօն ասաց.

— Գունդը յաղթւած է... մենք նրան յետոյ կը գտնենք... Գնանք դէպի ձախ... Առանջ, գնանք:

Կայի գիւղի մօտ ամենքիս անուն-անուն կոչ արին. երևաց, որ մեր վաշտից միայն 42 մարդ է մնացել: Երկարահասակ Ֆիւրստը չը կար, իսկ Կլիպֆէլը, Ձէրէդէն և ես փորձանքից ողջ դուրս էինք պրծել:

Բայց Կայի գիւղի մօտ պրուսացիները նորից վրա տւին մեզ, և կռիւը վերսկսեց: Այն ի՞նչ էր, Տէր Աստուած: Աղաղակչների, հրամանների և հրաձգութեան մէջ մենք սկսեցինք իջնել դէպի Հէրշէն, ուր սկսեց ձեռնամարտը. ամբողջ փողոցը բռնւած էր ժողովրդով:

Յանկարծ պրուսացիներին նոր օժանդակ զօրքեր եկան, և մենք սկսեցինք փախչել դէպի Կայի: Մենք թե առել, թռչում էինք, գլուխներս կորցրած, ցանկապատներով ցատկոտելով: Շրջելով փողոցի անկիւնը, ես գլուխս բարձրացրի և տեսայ Լայպցիգի ճանապարհին մեր սպաններից մի 50 մարդ ձիերի վրա նստոտած, իսկ նրանց ետևից, դղրդոցով ու աղմուկով՝ շտապով հասնում էր արտիլլերիան: Հասկացայ, որ Լայպցիգից շտապում էին մեզ օգնութեան: Չորս կողմը բոլորը ցնցեցին և աղաղակեցին. «Կեցցէ՛ կայսրը»: Շուրջը զարհուրելի խառնաշփոթութիւն էր տիրում:

Փողոցներում իրարանցում էր. գիւղի ընակիչները, տղամարդ, կին ու երեխայ, գլուխները կորցրած, վախկոտ դէմքերով շտապում էին թափնել նկուղներում և վերնատներում: Ամեն կողմից գիւղ էին մըտնում մեր զինուորները: Նրանք անցնում էին ցանկապատերով, ցատկում էին ցածր պատերով, պատառոտւած, արիւնաշաղախ, կատաղի դէմքերով, արիւնալի աչքերով:

20—30 հոգի, որոնց մէջ և ես, հաւաքեցինք ամբարի պատի տակին. պրուսացիները մեզ վրա էին վազում անկարգ խմբերով, իրար խառնւած, համարեա իրար կոխ տալով. մեզ բաժանում էր իրարից մի ոչ բարձր պատ: Պրուսացիներն իրար ետևից սկսեցին մագլցել այդ պատի վրա, իսկ մենք սկսեցինք կրակել նրանց վրա և փախչել ամբարի ետևը՝ հրացաններս լցնելու համար: Մեղանից 5 թէ 6 հոգի ընկան, բայց մենք այնպէս էինք կատաղած, որ ուշք չէինք գործնում դրա վրա:

Յանկարծ հրացանս վայր ընկաւ ձեռիցս, հրը ուսիս էի ուզում դնել: Ես կռացայ, որ վերցնեմ, բայց յանկարծ մի բան այրեց իմ ձախ ուսը, և ես վայր ընկայ: Զգացի, որ կարծես մի տաք ջրի հոսանք թափւեց կրծքիս վրայով, և հասկացայ, որ դա արիւն է և որ վիրաւորւած եմ: Փորձեցի վեր կենալ, բայց սարսափելով նկատեցի, որ արդէն ուժ չունեմ վեր կենալու. կարողացայ միայն, ծնկներիս վրա եկած գլուխս թեքել պատին և մի կերպ յենել: Իսկ արիւնը աւելի ուժով էր հոսում և նրա տաք հոսանքը մինչև անգամ ոտներիս հասաւ: Մտածեցի, որ մեռնում եմ և սարսափից ստոնցի. մեռնել այժմ, այդպէս անսպասելի կերպով, հեռու հայրենի ամեն ինչից, մեռնել սար-

սափելի կոտորածի մէջ, երբ ինձ վրա է իմ սպանած մարդկանց արիւնը և երբ դեռ նոր սիրտս բաբախում էր չարութիւնից և ատելութիւնով միայն լցւած:

Ընկերներս իրակ էին անում իմ գլխի վերևով, իսկ պրուսացիները նրանց պատասխանում էին:

Մտածելով, որ մի որ և է գնդակ կարող է դիպչել ինձ, ես ուզեցի սողալով անցնել ամբարի միւս կողմը. բոլոր ուժովս կպայ պատի անկիւնից, բայց ուժերս ինձ դաւաճանեցին, և ես ընկայ մի փոքրիկ արևի մէջ, որով փողոցի ջուրը գնում էր այգին: Ձախ թևս արճիճի նման ծանր էր թւում ինձ, իսկ գլուխս պատում էր. շուրջս կարծես ամեն ինչ դողդողում էր. հրացանների ձայները կարծես երազումս էի լսում...

Երբ աչքերս բաց արի, արդէն մութը կոխում էր, և պրուսացիները վազում էին փողոցով: Նրանք արդէն լցել էին գիւղը:

Այլևս հրաձգութիւն չը կար, բայց շուրջս ամեն ինչ աղմկում, ալեկոծում էր: Ահա հնչեց բազմաթիւ անիւնների ձայնը, և պատի անկիւնից երևացին թնդանօթներ: Անիւններն անցնում էին սպանւածների և վիրաւորների վրայով, այնպէս որ ոսկորները ձայնաթուրում էին, իսկ վիրաւորները սարսափելի բղաւում էին: Անիւնների տակից արիւնը վազում էր առուակներով, և փողոցի ցիւրը կարմիր գոյն առաւ. այդ ցիւրը բազկացած էր մտից և փշրւած ոսկորներից: Ես չը դիմացայ այդ բանին և ուշագնաց վայր ընկայ:

Կեանքիս մէջ երբէք չեմ կարողացել մոռանալ այդ տեսարանը: Արիւնս սառչում է երակներումս և սիրտս դադարում բաբախելուց, երբ այժմ էլ սկսում եմ յիշել այդ բանը:

Երբ դու արդէն ալեկարդ ծերունի ես և մի քանի

որդու տէր, զգուճմ ես, որ մարդիկ չեն կարողանում ապրել առանց այդ զարհուրելի բաների, խաղաղ, եղբոր նման: Ես պատրաստ եմ մինչև վերջին շապիկս տալ, միայն թէ ես պահեմ նրանց կուրից:

Տեսել եմ կիսամեռ մարդկանց իրար խեղդելիս: Մի անգամ հիւանդանոցում ստիպւած եղան պրուսացիներին ու ֆրանսիացիներին իրարից բաժանել, որովհետև նրանք գազանաբար վեր էին կենում անկողիններից, որ իրար պատառոտեն և ոչնչացնեն:

VIII

Ես վարթնեցի գիշերը, մեռելային լուսթեան մէջ: Երկնքով ամպեր էին անցնում, և լուսինը հանդարտ լուսաւորում էր թողնւած գիւղը, շուռ եկած թնդանօթները և մեռելների կոյտերը:

Ես չէի կարողանում տեղիցս շարժ գալ և զարհուրելի տանջւում էի. միայն աջ ձեռքս դեռ կարողանում էր շարժւել: Բայց և այնպէս՝ սարսափելի ջանք գործ դնելով, ես բարձրացայ մի քիչ՝ յենւելով արմունկիս վրա, և շուրջս միայն մեռելներ տեսայ՝ լուսնի լուսով լուսաւորւած: Ուղեցի բղաւել, բայց բղաւոցի փոխարէն երեխայական լացի նման մի բան դուրս պրծաւ կողորդիցս: Բայց այդ թող բղաւոցս զարթեցրեց ուրիշ վերաւորների էլ, որոնք կարծում էին, թէ օգնութեան են եկել. և բոլորը, ովքեր որ բղաւել կարող էին, սկսեցին բղաւել: Այդ բղաւոցները տեսցին մի քանի բոպէ. յետոյ ամեն ինչ լռեց, և իմ մօտակայքում լսելի էր միայն մի ձիւղ գօրեղ շունչը՝ ցանկապատի միւս կողմից, և մէկ էլ ինձանից հազիւ 5 քայլ

հեռու, երևի մի շատ երիտասարդ զինուոր դառը հեկեկում էր երեխայի նման:

Ուժ գործ դնելուց վէրքս բացել էր, և ես նորից ընկայ անզգայ վիճակի մէջ: Կարծես զառանցանքի մէջ լինէի. գլխովս անցնում էին իմ երեխայութեան զանազան պատկերներ, և ինձ թւում էր, թէ ես նորից դարձել եմ առաջնան փոքրիկ ժողէֆը և նստած եմ տանը, մօրս մօտ, որը ինձ տառեր է սովորեցնում. յետոյ ես սկսեցի մտածել, թէ տանն ի՞նչ են անելու, երբ լսեն իմ մահը: Յետոյ միտս եկաւ, որ 30—40,000 ընտանիքներ Ֆրանսիայում, Ռուսաստանում և Գերմանիայում նոյնպիսի, գուցէ և աւելի վատ լուր կըստանան, որովհետև կուրի դաշտում ընկածներից մեծ մասի հայր ու մայրերը դեռ կենդանի են, և այդ ամենն ինձ թրւում էր մի զգւելի, մի անաստուած բան:

Առաւօտեան դէմ անձրև եկաւ և լցրեց արխը, որի մէջ պառկած էի, այնպէս որ միայն գլուխս և արխից դուրս փնայած աջ ձեռքս ջրի մէջ չէին: Ժամանակ-ժամանակ լսում էին պատերի ու տանիքների քանդուկու ձայներ. կուրից վախեցած և ծակուծուկ մտած կենդանիները կամաց-կամաց հանգատացել և սկսել էին դուրս գալ իրանց թագստոցներից: Դրացի գոմում մի այժ մկկաց, անց կացաւ հովի մի մեծ շուն, պոչը կախ արած և մեռելներին հոտմտարով:

Այս բոլոր ջնջին մանրամասնութիւններն ամուր կերպով փորագրւել են իմ յիշողութեան մէջ: Մի բան ես երբէք չեմ մոռանալ, եթէ նոյն իսկ 100 տարի ասրեմ, այդ այն է, երբ ես լսեցի հեռուից ձայներ, — ինչպէս ես ուշքի եկայ... ինչպէս սկսեցի ականջ դնել, և ինչպէս մի քիչ վեր բարձրացայ, որ բղաւեմ. «օգնեցէք»: Դեռ ես մութն էր և հազիւ սկսում էր լոյսը

բացել: Հեռուում անձրևի միջով դաշտում շարժուում էր մի կրակ. նա երևում էր երբեմն մի տեղ, երբեմն մի ուրիշ տեղ և կանգ էր առնում... Իսկ նրա շուրջը շարժուում և դէպի ներքև էին ծուռում մի քանի սոււերներ. այդ սոււերները հազիւ էին նշմարուում, բայց և այնպէս միայն ես չէի, որ նկատեցի նրանց. ամեն կողմից սկսեցին հնչել աղիողորմ ձայներ, այնքան թոյլ, այնքան ուժասպառ, որ կարծես մայրերին կանչող մանր մանկիկների ձայներ լինէին:

Կրակը ետ ու առաջ էր շարժուում, յետոյ հանդարտ իջաւ ձորը և անյայտացաւ, իսկ ես նորից ուշագնաց եղայ:

IX

Երբ նորից ուշքի եկայ, գտնուում էի մի մեծ բակի մէջ. մի մարդ ինձ ջուր էր տալիս խմելու: Աչքերս բաց արի և տեսայ առջևս մի ծեր, սպիտակած զինուոր. նա մի ձեռքով բարձրացրել էր գլուխս, իսկ միւսով ջրի ամանը պահել էր շրթունքներինս մօտ:

— Հը՛,—ասաց նա ինձ փաղաքշական ձայնով,— հը՛, ի՛նչպէս ես, լմւ ես այժմ:

Երբ մտածեցի, որ դեռ կենդանի եմ, ուրախ ժրպտացի նրա երեսին: Կուրծքս և ուսերս պինդ կապած էին. կարծես այրուում էին նրանք:

Շուրջս խտէ դռակների վրա պառկած էին վիրաւորներ. բակի մէջտեղը դրած էր մի մեծ սեղան, որի վրա բժիշկները կապում էին վիրաւորների վէրքերը, իսկ 5—6 զինուոր վիրաւորներին ջուր էին տալիս խմելու: Բժիշկները խօսում էին իրար մէջ, և նրանց

խօսակցութիւնից իմացայ, որ 18,000 վիրաւոր կայ:

Ինձանից ոչ շատ հեռու նստած էր մի ծեր կապրալ, ոտը կապած. աչքերը շարժելով՝ նա ասում էր իր դրացուն, որի թևը հէնց նոր կտրել էին.

— Նորակո՛չ, նայիր այդ կոյտին. գրազ կը գամ, որ դրանց մէջ չես կարող ճանաչել քո թևը:

Եւ նա ցոյց տւեց սեղանի մօտ թափւած կտրատւած ձեռների ու ոտների մի ամբողջ կոյտ:

Մեռելի նման գունատ նորակոչը, որ մի քիչ առաջ մեծ կտրիճութեամբ դիմացել էր ծանր անդամահատութեանը, նայեց և իսկոյն ուշագնաց եղաւ:

Շուտով վիրաւորների համար սայլեր բերին: Բուլորիս նստեցրին կամ պառկեցրին նրանց մէջը և ուղարկեցին Լիւտցէն քաղաքի հիւանդանոցը: Անցնելով կուրի դաշտի մօտովը, ես տեսայ, թէ ինչպէս գիւղացիները թաղում էին սպանւածներին: Երբ Լիւտցէն հասանք, երևաց որ բոլոր հիւանդանոցները լիքը լցուած են և մեզ համար տեղ չըկայ: Ստիպւած եղանք շարունակել ճանապարհներս դէպի Լայպցիգ:

Մեզ, հիւանդ, տանջւած, կիսամեռներինս, կրկին տարան, այն էլ ծանր, լիկլիկան սայլերով: Այդ ի՛նչ ճամփորդութիւն էր,—յիշելն անգամ զարհուրելի է: Յնցումներից համարեա բոլորին վէրքերը բացեցին և ցաւերն սկսեցին. սայլերը լցեցին աղաղակներով, հառաչներով ու լացով: Մի քանիսն աղերսում էին, որ մի վայրկեան կանգնեցնեն սայլը և գոնէ թողնեն հանգիստ մեռնել: Շատերը զարհուրելի ցաւերից և թուլութիւնից ուշագնաց եղան, սկսեցին զառանցել. և ահա թշուառ վիրաւորների աղաղակի ու հեծկլտանքի միջից սկսեցին լսել խօսակցութիւններ, ծիծաղ,—գացաւից և ջերմից խելքերը կորցրած հիւանդներն էին.

մէկը խօսակցում էր իր ազգականների հետ, միւսը մի մի յիմար բան էր ասում և հրհռում: Յիշում եմ, մի թշուառական էլ գառանցանքի մէջ երգում էր: Այն ինչ երգ էր: Նա նստած էր սայլի մի անկիւնում, գունատ, աչքերը յառած մի կէտի և անվերջ մի և նոյն սրտաժաշ ձայնն էր հնչեցնում: Երբ Լայպցիգին մօտեցանք, բոլոր վիրաւորներն արդէն գառանցում էին և անզգայ ընկած էին:

Երբ արթնացայ, անկողնիս շուրջը 10-ի չափ բժիշկ էր կանգնած. նրանցից ամենամեծը քանդում էր իմ թևը, նրա օգնականը պատրաստ բռնել էր թասով ջուրը: Գլխաւոր բժիշկը նայեց իմ վէրքը, լաց, նորից կապեց և հրամայեց ինձ որքան կարելի է հանգիստ պառկել: Զգացի, որ շատ աւելի լաւ եմ այժմ, և պինդ քնեցի:

Այդպէս սկսեց իմ կեանքը հիւանդանոցում: Ինձանից մի քիչ հեռու պառկած էր ծերունի կանօնիր Խրիստիան Յիմմէրը:

Երբ վէրքից առաջացած տենդի ժամանակ ես վախենում էի որևէ բանից, նա բարկացած կերպարանք էր ընդունում և իր բարի, մշտածիծաղ աչքերովն ինձ նայելով՝ ասում էր.

— Ժողէֆ, խօս չես գփել: Ինչից ես վախենում: Միթէ ինձ ու քեզ նման կտրիճները կարող են մեռնել հիւանդանոցում: Ոչ... ոչ. մինչև անգամ այդ մասին չը համարձակես մտածել, եթէ ոչ կը բարկանամ և այլևս հետդ չեմ խօսիլ:

Իայց ինչ ուզում էր ասել, ամեն առաւօտ բժիշկների քննութիւնից յետոյ մեր դահլիճից դուրս էին տանում 7—8 մեռել: Մի քանիսը մեռնում էին վէրքերից, միւսները տենդից, ֆուսյածները մրսելուց:

Երեք շաբաթ յետոյ իմ ուսի ոսկորն սկսեց լաւանալ, երկու վէրքերն էլ համարեա ծածկեցին և ես սկսեցի կազդուրել: Յիմմէրն էլ քիչ-քիչ կազդուրում էր: Մեզ լաւ էին խնամում և շատ լաւ կերակրում:

Շուտով մեզ թոյլ տւին հիւանդանոցի պարտէզում զբօսնել: Ես ու Յիմմէրը ման էինք գալիս այգում, և ես պատմում էի նրան դէպի կատարինէն ունեցած սիրուս, Գուլդէնի և այն երջանիկ հին ժամանակի մասին, երբ ես աշխատում էի ժամագործի խանութում: Այդ պատմութիւնների ժամանակ յաճախ արտասուքներս հոսում էին աչքերիցս և կոկորդս սեղմում էր զսպւած հեկեկանքներից:

Նկատելով իմ արցունքները, ծերունի Յիմմէրն սկսում էր ինձ մխիթարել, որքան կարող էր, և որպէսզի խօսակցութիւնը փոխի, պատմում էր իր անցեալի մասին:

Վերջապէս բժիշկը քննելով թևս՝ ասաց, որ ես կարող եմ ծառայել, և հետևեալ օրն իսկ ինձ ուղարկեցին զօրաբանակը:

X

Մենք 15 հոգի էինք. դուրս եկանք Պուստովէն ենթասայլի հրամանատարութեամբ: Մենք գնում էինք մեծ ճանապարհով, հրացաններս ուսերիս, վերարկուներս ոլորած և ուսերիս անցկացրած, տոպրակներս մէջքերիս: Անձրևը տեղում էր անընդհատ և թրջում մեզ, իսկ քամին թափանցում էր մինչև մեր ոսկորները:

Ժամը 5-ի մօտերը տեսանք հեռուն մի ջրաղաց, փայտէ կամուրջը կողքին: Զրաղացը գտնուում էր մի

կողմնակի ճանապարհի վրա: Անցնելով այդ ուղիով, ջրաղացից դեռ 200 քայլ մնացած, մենք լեցինք սարսափելի բղաւոցներ: Միևնոյն ժամանակը ջրաղացից դուրս թուան երկու կինարմատ, լեղապատառ, մէկը բոլորովին պառաւ, իսկ միւսը երիտասարդ. նրանք քարշ էին տալիս իրանց հետ երեխաներին և սկսեցին արագ փախչել դէպի անտառը, կարծես ուզում էին շտապով այնտեղ թաղնել:

Նրանց ետևից ջրաղացից դուրս պրծան մեր զինւորներից մի քանի հոգի, պարկերը շալակած. մի քիչ հեռուն մի քանի ուրիշ զինւոր աշխատում էին դուրս հանել մառանից փոքրիկ տակառներ և դնել մօտերը կանգնած սայլի վրա: Ուրիշները գոմից դուրս էին բերում կովեր ու ձիեր, իսկ ծերունի ջրաղացպանը, մեռելի նման դեղնած, աշխատում էր դուրս պրծնել զինւորների ձեռքից, որոնք բռնել էին նրա թևերը:

— Ա՛, — անվրդով ասաց Պուատվէն ենթասպան, տեսնելով այդ կողոպտող զինւորներին, — դրանք թաւանիչներ են: Կընշանակի՞ բանակից շատ հեռու չէին:

— Բայց դա խօ զգւելի՞ է, — բղաւեցի ես: — Չ՞ որ դա աւազակութիւն է:

— Ի հարկէ, — ասաց ենթասպան. — դա օրէնքով արգելւած է: Եթէ կայսրն այդ իմանայ, խիստ կը պատժի դրանց:

Երբ մենք մօտեցանք ջրաղացին և անցնում էինք զինւորների մօտով, որոնք գինու տակառի յատակը կտորել և թասով գինի էին խմում այնտեղից, Պուատվէնը խտուրթիւնով բղաւեց նրանց վրա.

— Ո՞վ է ձեզ թոյլ տւել աւազակութիւն անել:

— Է՛հ, բարեկամ, — պատասխանեց նրանցից մէկը.

— երևում է որ նախանձեցիր: Աւելի լաւ է, այս գի-

նու համը տես, խմիր մեզ հետ: — Եւ նա առաջարկեց նրան զինով լի թասը:

Ենթասպան առաւ ու խմեց, աչքի պոչով ինձ նայելով. երևում էր, որ ամաչում էր ինձանից, բայց ձրի խմելու ցանկութիւնը յաղթեց:

— Ինչ արած, երիտասարդ, — ասաց նա ինձ մի քանի րոպէ լռելուց յետոյ. — քաղցած խօ չըպէ՞տք է մեռնենք:

Ինձ թւում է, թէ նա կը մնար այնտեղ, կողոպտիչների հետ, եթէ որ պատժից չը վախենար: Ես սաստիկ տխրեցի և մտածեցի.

«Ա՛յ թէ ինչ են հարբեցողները: Նրանք կարող են ունենալ լաւ դիտաւորութիւններ, բայց մի թաս գինու միայն տեսքն ստիպում է նրանց մոռանալ աշխարհում ամեն բան»:

Վերջապէս, երեկոյեան ժամը 10-ի մօտերը մենք տեսանք անտառում բանակի կրակը, իսկ հեռուն, հովտի մէջ նոյնպէս երևում էին խարոյկներ:

Մենք մօտեցանք գնդապետի վրաններին: Ես տւի նրան իմ տոմսը. նա հրամայեց ինձ գնալ իր վաշտը:

Գնդերն այնքան խառնւած էին, որ ես ոչ ոքի չը ճանաչեցի: Ինձ շրջապատեցին սարսափելի լղարած դէմքեր, սուր բթերով և ցցւած ականջներով: Կեղտի մասին խօսելն էլ աւելորդ է:

Զինւորները, տեսնելով մի նորեկ, ծուռ-ծուռ էին նայում ինձ, կարծես ուզում էին ասել. «Երևի սա էլ սուպ պէտք է ուզի: Մենք ուտելու շատ բան ունէինք, որ սա էլ աւելացաւ»:

Ես ամաչում էի խարոյկի մօտ տեղ խնդրել նըստելու և կանգնած տեղս ոտներս փոխում էի. այդ ժամանակ յանկարծ մի ոսկրոտ զինւոր, արծաւքիթ, լղար

ու չորացած դէմքով, դուրսը բարձրացրեց և, ինձ նայելով, ասաց բոլորովին անտարբեր ձայնով:

—Ա՛, այդ դու ես, Ժօղէֆ: Իսկ մենք քեզ համարում էինք սպանւած:

Այդ ժամանակ միայն ես ճանաչեցի խեղճ Ձէրէ-դէին: Կարծեմ իմ տանջւած կերպարանքը շարժեց նրա սիրտը, որովհետև նա ձեռքը մեկնեց դէպի ինձ և բըղաւեց:

—Կլիպֆէլ... անա և Ժօղէֆը:

Կողքի խարոյկի մօտ նստած զինւորը երեսը դարձրեց դէպի մեզ և յոգնած ձայնով ասաց.

—Այդ դձու ես, Ժօղէֆ: Կը նշանակի դու չը մեռած:

Ահա և այն բոլոր ողջոյնները, որով ընդունւեցի՝ բանակը վերադառնալով:

Բայց շուտով ես համոզւեցի, որ Ձէրէդէն հոգով կրկին նոյն բարի մարդն էր մնացել. նա ինձ կանչեց իր ամանից ուտելու և իր գդալն էլ ինձ տւեց: Բայց ես շնորհակալութիւն յայտնեցի նրան, որովհետև իմ տոպրակում շատ տեսակ-տեսակ ուտելիքներ կային:

Կէս ժամից յետոյ հաւաքւելու փողը փչեցին, և մենք առաջ շարժւեցինք: Ձէրէդէն առաջւայ նըման իմ կողքիցս էր գնում: Եղանակը մեզ համար նըպաստաւոր չէր: Անձրևները տեղում էին անդադար և խանգարում էին մեզ առաջ շարժւելու: Երիտասարդ զինւորները մէկը միւսի ետևից մեռնում էին սովից ու յոգնածութիւնից: Մշտական ճամփորդութիւնը, ցեխի մէջ գիշերելը, սովը, միջատները թունաւորում էին մեր կեանքը: Շատերը մտածում էին. «Պէտք է մի կերպ վերջ տալ կեանքին... այսպէս ապրել չէ կարելի»:

Մի քանի օրից յետոյ ես այնպէս նիհարեցի, որ հազիւ էի ոտներս քարշ տալիս: Օրէցօր լրարում էի:

Նոկտեմբերի 14-ին մեր բառալիօնը դիմեց դէպի Սախէն քաղաքը. ամեն կողմից զօրքեր էին շարժւում և բոլորն էլ, չը զիտեմ ինչո՞ւ, ասում էին.

—Ճակատամարտը մօտ է... Ճակատամարտը մօտ է...

Եւ իրօք, Լայպցիգի մօտ տեղի ունեցաւ ճակատամարտը և մի այնպիսին, որ սէրժանտ Պինտօն ասում էր. «Այս կուռի նման կատաղի կուռ եղել է սր»: Այստեղ պէտք է մեզանից ամեն մէկը երեքի դէմ կըուէր, և շուտով ստիպւած եղանք ետ նահանջելու: Մի քիչ ժամանակ Պլէյսի գետի ափով գնալով, մօտեցանք կամուրջին: Տէր Աստուած, ի՜նչ ուրախութիւնով մօտենում էինք նրան և ի՜նչ պատահեց այնտեղ:

Հազիւ մօտեցել էինք կամուրջին, երբ մեր ամբողջ բանակը, հետևակ և ձիաւոր, զինւոր և սպայ, վազեց դէպի կամուրջը և, իրար հրելով, բղաւելով ու իրար ճխլելով, շտապեց միւս ափը: Կամուրջի վրա սարսափելի իրարանցում տեղի ունեցաւ: Ում որ հըրում էին կամուրջի եզրների մօտ, նա ջուրն էր գըլորւում, բայց ոչ ոք դրա վրա ուշք չէր դարձնում. մարդիկ վայր էին ընկնում և ոտի տակ կոխտուում, ձիերը սայթաքում և նոյնպէս ընկնում էին, տանելով հետները ձիաւորներին:

Հրաձգութիւնը ամեն բօպէ մօտենում էր մեզ, և քաղաքից մեր զինւորների հետ միասին երևացին և պրուսացիները:

Կամուրջի մօտ մի զարհուրելի բան էր կատարւում. հեծեալները, որպէս զի իրանց ճանապարհ բացանեն, սրերով կտրատում էին հետևակներին, իսկ սրանք էլ պաշտպանւում էին սելիններով: Այժմ արդէն ամբողջ ամբողջ կարողանում էր շարժւել միայն դանդաղ,

քայլ առ քայլ, և ամբոխի ամեն մի քայլափոխին մի մարդ գլորուում էր կամուրջից և, ջանալով վայր չընկնել, քաշում-տանում էր իր հետ 5—6 մարդու:

Յանկարծ կարծես մի ամպի որոտ լսեց. կամուրջը ցնցեց և նրա մի մասը քանդեց ու ընկաւ ջուրը, տանելով իր հետ վրան եղած բոլոր էակներին: Հարիւրաւոր դժբախտներ խեղդեցին ջրում, շատերն էլ ընկան այլանդակած, պատառ-պատառ եղած. չը գիտեմ ով՛ կամուրջը պայթեցրել էր:

Այդ տեսնելով, ամբոխը դողաց և ետ փախաւ: Կատաղութիւնից և յուսահատութիւնից իրան կորցնելով, ամբոխը յարձակեց թշնամու վրա՝ ինչպէս վայրի մի գազան, և սկսեց կուել: Սպաները և գեներալները ձիով թռչում էին կամուրջից ջուրը, որպէս զի լողալով անցնեն. զինուորները թռչում էին նրանց ետևից, մոռանալով հանել իրանց պարկերը: Զուրն ընկնող թշուառ-կանները մաքառում էին ջրի մէջ, սարսափելի բղաւելով և իրար բռնելով: Ամբողջ գետը լցւել էր նրանցով. ձեռներն ու գլուխները ջրի երեսին վխտում էին:

Ես շատ լաւ գիտէի գետում մի տեղ, որտեղից հեշտութեամբ կարելի էր անցնել ծանծաղուտով: Ուզում էի այդ իմաց տալ, բայց ոչ ոք ինձ չէր լսում: Արտասուքն աչքերիս վազում էի մէկ այս, մէկ միւս սպայի մօտ, պաղատելով լսել ինձ, բայց բոլորն էլ կարծես խելագարել էին և չէին հասկանում, թէ ինչ եմ ասում:

Վերջապէս պատահեցի կապիտան Վիդալին, որն սկսեց լսել ինձ: Ես ասացի նրան, որ կեանքս անց եմ կացրել այստեղի հիւանդանոցում. շատ անգամ լողացել եմ այս գետում և գիտեմ ծանծաղուտ տեղը:

Նա իսկոյն մերկացրեց սուրը և որոտազին կանչեց.

—Տղայք, իմ ետևից:

Առաջինը ես մտայ գետը, իմ ետևից եկաւ կապիտանը և ապա ամբողջ բատալիօնը զոյգ-զոյգ: Մենք ապահով անցանք, և ոչոք չը խեղդեց:

Գետն անցնելով, մենք լուռ առաջ անցանք դաշտերի միջով, իսկ մեր ետևում դեռ երկար լսում էին աղաղակներ, հրաձգութիւն և սրերի շաշիւն:

XI

Լիւտցէնում մենք միացանք բանակի միւս ֆնացորդների հետ և շարժեցինք դէպի տուն: Վերադարձողների մէջ էին նաև սէրժանտ Պինտօն ու Զէրէզէն:

—Մեր բախտն այս անգամ էլ բանեց,—ասաց ինձ Զէրէզէն.—բատալիօնում այժմ ես ու դու ենք վերջին պֆայցբուրգցիները... Կլիպֆէլին հուսարները կտոր-կտոր արին:

—Դու տեսա՞ր նրան,—հարցրի ես, գունատելով:

—Այո, նա 20 սրի հարածից աւելի ստացաւ և բղաւում էր. «Զէրէզէ, Զէրէզէ»:

Մի վարկեան ետոյ նա աւելացրեց.

—Զարհուրելի է լսել, ինչպէս քեզ կանչում է մահ-կութեանդ ընկերը և ոչ մի հնար չունիս նրան օգնելու:

Լայպլիգից նահանջելու օրից սկսած՝ ինձ մի տենդ բռնեց, որ միշտ աճում, սաստկանում էր, այնպէս որ գիշեր-ցերեկ դողացնում էի: Այնպէս էի թուլացել, որ առաւօտները հազիւ էի տեղիցս վեր կենում և ճանապարհը շարունակում: Զէրէզէն տխրութեամբ նայում էր վրաս և երբեմն ասում.

—Համբերիր, ժողէֆ, համբերիր. շուտով տուն կը հասնենք:

Այս խօսքերն ինձ սիրտ էին աալիս. ես զգում էի, որ ուժերս աւելանում էին և երեսս կարմրում էր:

—Այո՛, այո՛, շուտով տուն կը վերադառնանք,— ասում էի ես:—Ինչ որ էլ լինի, պէտք է տուն հասնեմ:

Բայց մի քանի բոպէ յետոյ նորից թուլանում էի և հազիւ էի սկսում ոտներս քարշ տալ:

—Յենւիր ինձ վրա... Ամեն օր մենք աւելի և աւելի մօտենում ենք, ժողէֆ... էլի մի 15 օր, և մենք տանը կը լինենք:

Բայց մի կանգին, երբ մեզ հրամայեցին ճանապարհը շարունակել, ես զգացի, որ այլ ևս ուժ չունէի նստած տեղից վեր կենալու:

—Ե՛հ, ժողէֆ,—համոզում էր ինձ Զէբէդէն.— ոչինչ... մէկ փորձիր:

Ես փորձեցի մի անգամ էլ վեր կենալ, բայց ուժ չունէի, և սկսեցի հեկեկալ, ասելով.

—Չեմ կարող:

—Վեր կաց,—շարունակում էր նա:

—Չեմ կարող... Տէր Աստուած, չեմ կարող:

Ես պինդ բռնեցի նրա ձեռքից... Արցունքները հոսում էին նրա փոս ընկած այտերի վրայով... Նա փորձեց շալակել տանել ինձ, բայց ինքն էլ չափազանց թոյլ էր, և մի քանի քայլ ետոյ նա ստիպւած եղաւ նորից ինձ դնել գետնին: Այն ժամանակ ես բռնեցի նրա վերարկուի փեշից և բղաւեցի.

—Զէբէդէ, մի թողնիր ինձ մենակ:

Եւ դէպի ինձ քաշելով Զէբէդէին, որպէս զի գըրկեմ նրան վերջին անգամ, ես փսփսացի նրա ականջին.

—Համբուրիր իմ փոխարէն Կատարինէին... ասա՛

նրան, որ ես մեռայ նրան համբուրելով, և որ դու բերել ես նրան այս վերջին համբոյրս:

—Այո՛,—հեծկտարով ասում էր նա,—այո՛... կասեմ այդ նրան, իմ խեղճ ժողէֆ:

Ես չէի կարող բաժանել նրանից. նա ինձ վայր դրեց գետնին, կամաց ազատեց իմ ձեռներից և արագ, առանց ետ նայելու, սկսեց համնել առաջ անցած ընկերների ետեից... Նրանք հեռանում էին... ես երկար նայում էի նրանց ետեից, և արցունքները հեղեղի նման հոսում էին աչքերիցս... Ահա և վերջին զինուորներն անցան բլրի այն կողմը, անյայտացան... Ես աչքերս փակեցի և մոռացութեան մէջ ընկայ: Զարթնեցի միայն մի ժամ ետոյ և զարմանքով լսեցի մի աղմուկ և զէնքերի շաչիւն, կարծես մի ամբողջ գունդ էր գնում:

Եւ այդպէս էլ էր.—շուտով տեսայ ճանապարհին գվարդիական մի ամբողջ դիվիզիա՝ ֆուրգօններով և թնդանօթներով: Ետեից գնում էին մի քանի սայլեր՝ հիւանդներով լի, և ես սկսեցի բղաւել, ամբողջ ուժով:

—Ինձ էլ տարէք... ինձ էլ տարէք...

Բայց ոչ ոք իմ աղաղակների վրա ուշք չէր դարձնում: Բոլորն անցնում էին մօտովս դըրդոցով ու զընգզնգոցներով: Այդպէս անցան իմ մօտով 10,000-ից աւելի մարդ, և ես այլևս ուժ չունէի բղաւելու:

Վերջապէս երևացին վերջին շարքերը. արդէն տեսնում էի, որ ոչ մի նպատակի չեմ հասնելու, սկսեցի դառը հեծկտալ: Մի թնդանօթի մօտով սլանում էր մի բարձրահասակ, նիհար, շիկահեր թնդանօթաձիգ, խաչը կրծքին, և յանկարժ ես ճանաչեցի. նա Յիմմէրն էր, Լայպցիգի հիւանդանոցի իմ ընկերը: Նա ձին քըռում էր, չը նկատելով ինձ, իսկ իմ սիրտն այնպէս ուժգին բարախեց, կոկորդս այնպէս սեղմեց, որ ա-

ուաջին վայրկեանում ոչ մի բան չը կարողացայ արտասանել: Այն ինչ նա արդէն անցաւ և սկսեց հեռանալ: Այն ժամանակ ես բոլոր ուժերս հաւաքեցի և բղաւեցի.

—Սրբիստիան... Սրբիստիան...

Եւ նա լսեց ինձ, չը նայելով շարժւող թնդանօթների աղմուկին և դղրդոցին, ետ դարձաւ և տեսնելով ինձ ծառի տակին՝ զարմանքից քարացաւ:

—Սրբիստիան,—բղաւեցի ես.—տանք ինձ:

Նա մօտեցաւ, նայեց վրաս, և գունատուեց:

—Այդ դժու ես, իմ սիրելի ժօզէֆ,—բացականչեց նա, ձիւց վայր թռչելով:

Նա ինձ երեխայի նման ձեռները վրա առաւ, բղաւեց վերջին սայլի հետ գնացող զինւորներին.

—Կանգնեցէք... առէք...

Եւ, համբուրելով ինձ, դրեց Փուրգօնի մէջ, մի տոպրակ դնելով գլխիս տակը: Նա հանեց իր վերարկուն և ծածկեց ինձ, ասելով.

—Դէհ, մնաս բարով, պէտք է շտապեմ, մերոնց հտեից հասնեմ:

Այսքանն եմ միայն յիշում. ետոյ ուշագնաց եղայ: Կարծես երազիս մէջ՝ լսում էի աղմուկներ, հրաձգութիւն, հրամաններ, տեսնում էի բարձր մայրիներ, որ ցցւած էին դէպի երկինք:

Յունվարի 15-ին, 2¹/₂ ամիս անցած այն օրից, երբ ինձ վերցրին Փուրգօնի վրա, ես զարթնեցի մի սիրուն անկողնի մէջ՝ մի լուսաւոր սենեակում: Նայեցի փոքրիկ լուսամուտներին. նրանք ծածկւած էին եղեամով: Ինքս ինձ ասացի. «Չմեռ է»: Մի քանի բոպէ յետոյ դարձայ միւս կողքիս և տեսայ օջախի առաջ նստած մի գունատ աղջիկ. ճանաչեցի—Կատարինէն էր: Ես ճանաչեցի և այդ սենեակը, ուր երբեմն գալիս էի ժա-

մանակ անցկացնելու այն երջանիկ կիրակի օրերը, պատերազմի գնալուց առաջ:

Երկար նայում էի ես Կատարինէին: Նա ինձ թւում էր շատ գեղեցիկ: Նայում էի ու մտածում. «Իսկ մօրաքոյր Գրէդէլն ո՞ւր է: Ի՞նչպէս ես ընկայ այստեղ: Մի՞թէ ես ու Կատարինէն արդէն ամուսնացել ենք: Տէր Աստուած... Չը լինի՞ թէ սա երազ է»:

Վերջապէս, սրտապնդելով, ես կամացուկ ասացի. —Կատարինէ:

Նա իսկոյն վրա վազեց դէպի ինձ, բղաւելով.

—Ժօզէֆ... դու ճանաչո՞ւմ ես ինձ:

—Այո,—ասացի ես, ձեռներս նրան մեկնելով:

Նա մօտեցաւ, յուզմունքից ամբողջ մարմնով դողալով, և ես երկար համբուրում էի նրան:

Երկուսս էլ հեկեկում էինք:

Յետոյ Կատարինէն պատմեց ինձ, թէ ինչպէս մի երկու շաբաթ առաջ Պֆալցբուրգով անցնում էին հազարաւոր սայլեր, վիրաւորներով ու հիւանդներով լըցւած: Մօրաքոյր Գրէդէլը և Կատարինէն, դրանք կանգնած, նայում էին այդ տխուր գնացքին: Արդէն 1000-ից աւելի սայլեր անց էին կացել, իսկ ես չը կայի նրանցից ոչ մէկի վրա:

Երբորդ օրը Կատարինէն ճանաչել էր ինձ՝ հազարաւոր ինձ նման թշուառների մէջ, փոս ընկած այտերով, քաղցից մեռնելիս: «Սա նա է... սա ժօզէֆն է», —բղաւել է նա հեռուից:

Բայց ոչ ոք չէ ուղեցել նրան հաւատար: Վերջապէս մօրաքոյր Գրէդէլը մի լաւ գննելով՝ ասել է. «Այո, սա նա է... վայր առէք սրան սայլից, սա մեր ժօզէֆն է»:

Նա հրամայել է ինձ տանել իր տունը և գիշերեցերեկ խնամել է ինձ: Ես մի գլուխ բղաւելիս եմ հղել.

»Ձոր, ջոր»։ Գիւղում ոչ ոք հաւատալ անգամ չէ ուզեցել, որ ես ուշքի կը գամ։ Բայց մօրաքոյր Գրէգէլի և Կատարինէի խնամքն ինձ փրկել է, իսկ տանը լինելու և իմ սիրած էակներին տեսնելու երջանկութիւնը շուտով ինձ ոտի կանգնեցրին։

Այժմ քնում է միայն պատմել մօրաքոյր Գրէգէլի մասին։ Նա եկաւ իմ ուշքի գալուց մի ժամ ետոյ։ Ի՛նչպէս ձեռներն իրար խփեց նա ուրախութիւնից, ի՛նչպէս գրկախառնեց ու համբուրեց նա ինձ, անդադար բացազանչելով։

— Ժօզէֆ... Ժօզէֆ... փանօք Աստծու, որ վերջապէս պրծար այնտեղից։ Թող այժմ փորձեն քեզ տանել... Թող քթերը ներս կոխեն։ Ա՛խ, ի՛նչպէս էի զըղջացել, որ այն ժամանակ թողի քեզ գնալու... Ի՛նչպէս անիծում էի ես զօրք ժողովելը և քնացած բոլոր բաները... Բայց Աստուծ խղճաց մեզ վրա... Եւ բարի պառաւը նորից սկսում էր գրկել ինձ, գոգնոցով սըրբելով իր առատ արցունքները։

Նուտով եկաւ և պարոն Գուլգէնը, և մեր ուրախութիւնը վերջ չունէր։

Իրանից վեց ամիս անցած, ես ու Կատարինէն ամուսնացանք։ Պարոն Գուլգէնը, որ մեզ սիրում էր իր հարազատ զաւակների նման, ինձ ընկերացրեց իր գործին և մաս հանեց։ Նա հրաւիրեց մեզ ընակել իր տանը, և մենք սկսեցինք ապրել բոլորս միասին, իբրև մի երջանիկ ու իրար սիրող ընտանիք։

«Ազգային գրադարան»



NL0312154

6001

Ժ ո ղ ո լ ը ղ ա կ ա ն զ ր ք ո յ կ ն Ե Ր

1. Դեմիրչեան. Գ. Ուխտաւորներ, Աշուղի հէքիաթը. 7 կ.
2. Վեհաան. Վ. Մի անմեղ մարդու սոսկ ի՛նչ մա- 6 կ.
3. Շխեանց Ա. Մի մահ և Անառակը. պատ- 7 կ.
4. Շասրիան Է. Ժամագործի յիշողութիւնները 8 կ.

Հ Է Ի Ի Ա թ Ն Ե Ր Ի Ա Շ Խ Ա Ր Հ

պատկերագրող սերիա

1. Գագ. Աղայեանի. Գիւլնազ-սաաթի հէքիաթը, Մա- Այ-
ժատուր, Զանգի-Զրանգի՛ 15 կ.
2. » » Եղեկունի, Անտառի մանուկը, 15 կ.

Հ Ա Յ Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Շ Ն Ե Ր

ընդհանուր վերնադրի տակ հետզհետէ լոյս են տեսնելու առանձին գրքոյկներով մեր բանաստեղծները լաւագոյն ստեղծարարութիւնները: Արդէն հրատարակ-
ւած են

1. Յովնան. Թումանեանի Սասունցի Դաւիթը 15 կ.
2. » » Այուլ 15 »
3. » » Լեզհնդներ 15 »
4. Շանթի Երգեր 15 »
5. » » Լեռան աղջիկը 15 »

Գ Ի Ն Ն Է Տ Կ Ո Պ.

Դ Ի Մ Ե Լ Գ Ի Ս Վ Ա Ճ Ա Ռ Ն Ե Ր Ի Ն

Հրատարակութիւնների պահեստ՝ Թիֆլիս, То-
варищество „Ст. Лисицианъ и К^о“ (Бебутовская ул.
29) և Типографія „Гермесъ“ (Мадатовская ул. 15).